

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Վարչապետի Մամլոյ Ասուլիսի Դետքերով

Մարտ 14-ին կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին 33 վարչապետ Նիկոլ Փաշինեան կատարեց ուշագրաւ յայտարարութիւններ՝ պատասխանելով լրագրողներու սուր հարցերուն յատկապէս ընդդիմադիր լրատուամիջոցները ներկայացնող թղթակիցներուն կողմէ:

Իր բացման խօսքին մէջ վարչապետը անդրադարձաւ նախորդ տարուայ ընթացքին երկրի դիմագրաւած խնդիրներուն եւ տնտեսական գետին վրայ արձանագրուած նուաճումներուն: Ըստ վարչապետին, կառավարութեան գործունէութեան առանցքային մարտահրաւերը կը շարունակէ մնալ արտաքին անվտանգութեան ապահովումը՝ Սեպտեմբերի 13-ին Ատրպէյճանի կողմէ Զայաստանի ինքնիշխան տարածք յարձակումին, նոր պատերազմի սպառնալիքի եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ տիրող իրավիճակի լոյսին տակ:

Ինչ կը վերաբերի ձեռք ձգուած դրական արդիւնքներուն, Փաշինեան 2022 տարին նկատեց լայնածաւալ բարեփոխումներու տարի, որոնց արդիւնքով արձանագրուած է վերջին 15 տարիներու համար աննախադէպ՝ 12,6 տոկոս տնտեսական աճ, պետական պիւտճէի հարկային եկամուտները կազմած են աւելի քան 5 միլիարդ տոլար, շարունակուած է նոր աշխատատեղերու թուի աճը:

Այս բոլորով հանդերձ Փաշինեան չվարանցեալ յայտարարելու որ, Յեղափոխութիւնը չէ հասած իր բոլոր նպատակներուն, սակայն այդ ուղղութեամբ պայքարը կը շարունակուի:

Ասուլիսի ընթացքին մեծ տեղ յատկացուած էր անվտանգային եւ նոր պատերազմի հաւանականութեան վերաբերեալ հարցերուն: Այս ուղղութեամբ Փաշինեան շեշտեց, որ իր եզրակացութիւնը այն է թէ, Ատրպէյճանի աւելի ու աւելի յարձակողական դարձող հեռուորաբանութիւնը եւ որոշակի այլ տուեալներ ենթադրել կու տան որ, նոր պատերազմի վտանգը այժմ բաւականին մեծ է եւ Զայաստանի սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի տարածքին, ուր վերջին օրերուն Ազերի զօրքերը յարձակում գործելով սպանցեցին երեք Զայաստանցիներ:

Պատերազմի հաւանականութեան մասին վերջին օրերուն կը խօսին նաեւ Ամերիկեան պաշտօնական աղբիւրները: Երկրի հետախուզական ծառայութիւնները Գինկրէսին ներկայացնե-

Այժմ Շատ Մեծ է Մազլցունի Զաւանականութիւնը Ե՛ւ Զայաստանի Սահմանին Երկայնքով, Ե՛ւ ԼՂ-ի Մէջ. Փաշինեան

«Եթէ դուք հետեւում էք լրահոսին պէտք է տեսնէք Ատրպէյճանի շարունակուող յարձակողական հեռուորաբանութիւնը եւ քաղաքականութիւնը, որն անընդհատ աճել է, եւ աճել է նաեւ 2020 թուականի պատերազմից առաջ, աճել է 2020 թուականի պատերազմից յետոյ, եւ ես կարծում եմ, որ այժմ, հիմա շատ մեծ է մազլցունութեան զաւանականութիւնը ե՛ւ Հայաստանի սահմանի երկայնքով, ե՛ւ ԼՂ-ի մէջ», այդ մասին Մարտ 14-ին լրագրողներուն հետ հարցուպատասխանի ժամանակ ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ պատասխանելով հարցին, թէ հիմա Հայաստանը կանգնած է նոր լայնածաւալ պատերազմի եզրին՝ ինչպէս յայտարարած է Գերմանիոյ մէջ եւ կա՞ն արդեօք զսպող մեխանիզմներ:

Վարչապետը նշեց, որ իր եզրակացութիւնը Ատրպէյճանի աւելի ու աւելի յարձակողական դարձող հեռուորաբանութեանն է, եւ ի հարկէ կան որոշակի այլ տուեալներ: Խօսելով նաեւ զսպման մեխանիզմներուն մասին, վարչապետը ըսաւ, որ իրենք (Եւրոպացիները իս.) համոզուած են եւ 100 տոկոսով գիտեն, որ Հայաստանը չէ, որ կը նախաձեռնէ նախադարձակ գործողութիւններ եւ մազլցունութիւն, այս է պատճառը, որ Հայաստանը



Վարչապետ Փաշինեան մամլոյ ասուլիսի ընթացքին

համաձայնեցաւ կամ որոշում կայացուց հրաւիրել ԵՄ դիտորդները: «Նախորդ ասուլիսին, եթէ չեմ սխալուում, մենք այդ թեմայի շուրջ խօսելու առիթ ունեցել ենք, թէ ինչու եւ ինչպէս ծագեց այդ զաղափարը, որովհետեւ, թէ՛ 2020 թուականի պատերազմից առաջ, թէ՛ դրանից յետոյ, Ատրպէյճանը որեւէ մազլցունութիւն բացատրում էր Հայաստանի գործողութիւններով եւ մենք, ի վերջոյ հասկանալով, որ հարցեր ենք ստանում, նաեւ ԵՄ մեր գործընկերների կողմից, ասեցինք՝ մենք դէմ չենք, եթէ դուք

դիտորդներ ուղարկէք, որպէսզի դուք մեր տեղեկատուութեան վրայ հիմնուելու անհրաժեշտութիւն չունենանք, դուք տեղից ունենաք տեղեկատուութիւն, ե՛ւ մեր, ե՛ւ Ատրպէյճանի տեղեկատուութիւնը ծանրութեթեւ անելու անհրաժեշտութիւն չունենանք:

Ի միջի այլոց ձեզ ուզում եմ տեղեկացնել, որ 2022 թուականի Հոկտեմբերին, Փրակի մէջ, նախական պայմանաւորութիւնն այն էր, որ ԵՄ դիտորդներ պէտք

«Յստակ Ուղերձ Կ'ուղարկեմ Ատրպէյճանի Նախագահ Ալիեւին Եւ Կ'ըսեմ՝ Վերացուր Շրջափակումը Այսօր, Անյապաղ» ՆԱԹՕ-ի Նախկին Գլխաւոր Քարտուղար

«Հայաստան վերջին անգամ այցելած եմ 2012 թուականին՝ որպէս ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար, այդ ժամանակէն ի վեր շատ բան տեղի ունեցած է: Ես հանդիպած եմ վարչապետին, արտաքին գործերու նախարարին, պաշտպանութեան նախարարին, եւ ես հոն հունակութիւնս պէտք է չափենեմ, թէ ինչ ջանքեր իրենք ներդրած են, որպէսզի Հայաստանի մէջ ամբարապնդեն ժողովրդավարութիւնը: Ես այստեղ եմ ՀՀ կառավարութեան հրաւիրով, որպէսզի օգնեմ կառավարութեան ամբարապնդել կապերը Արեւմուտքի հետ, ԵՄ-ի հետ առհասարակ», այս մասին Ջերմուկի մէջ ձեպագրուող ժամանակ ըսած է երկօրեայ այցով Հայաստան գտնուող ՆԱԹՕ-ի նախկին գլխաւոր քարտուղար Անտերս Ֆոկ Ռասմուսենը:

Ան տեղեկացուց, որ հանդիպումներ ունեցած է Երեւանի մէջ, այնուհետեւ այցելած է Հայաստանի հարաւային մարզերը, որպէսզի իր աչքով տեսնէ ատրպէյճանական յարձակման հետեւանքները Հայաստանի վրայ: Անտերս Ֆոկ Ռաս-



ՆԱԹՕ-ի նախկին գլխաւոր քարտուղար Անտերս Ֆոկ Ռասմուսեն

մուսեն նաեւ նշեց, որ հիմա այցելած է հրաշալի Ջերմուկ քաղաք, եւ քաղաքապետը իրեն ըսած է, թէ ինչ ազդեցութիւն ունեցած են ատրպէյճանական յարձակումները քաղաքին վրայ, զբօսաշրջութեան վրայ:

Արցախ Կը Դերքէ Զայաստանէն Զինուորներ Ու Զէնք Տեղափոխուած Ըլլալու Մասին Պաքուի Մեղադրանքները

Ատրպէյճանական լրատուամիջոցները, Մարտ 13-ին, հերթական ապատեղեկատուութիւնը տարածած են այն մասին, որ ռուսական խաղաղապահ զօրակազմի ծառայողներուն ուղեկցութեամբ Հայաստանէն Արցախ գինուորներ ու զէնք տեղափոխուած է՝ կից հրապարակելով ինքնաշարժներու փոքր շարասիւնի տեսանիւթ մը:

Իրականութեան մէջ, ատրպէյճանական կողմին հրապարակած տեսանիւթին մէջ ոչ թէ ռազմական, այլեւ Արտակարգ Իրավիճակներու Պետական Ծառայութեան պատկանող ինքնաշարժներ են: Փրկարար ծառայողները շրջափակման հետեւանքով Արցախի մէջ մնացած ՀՀ քաղաքացիութիւն ունեցող խաղաղ բնակիչները ռուս խաղաղապահներու ուղեկցութեամբ Շուշին շրջանցող լեռնային ճանա-

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ակտիվ Ֆոն. Փաշինեանը Դարձեալ Ձանգահարել է Փուլթին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի նախաձեռնութեամբ տեղի է ունեցել Փաշինեան-Փուլթին հեռախոսագրոց, որի ընթացքում քննարկուել է Ատրպէյջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում շարունակուող հումանիտար ճգնաժամը: Ըստ հայկական կողմի տարածած հաղորդագրութեան, Նիկոլ Փաշինեանն այդ համատեքստում անդրադարձել է Մարտի 5-ին Ատրպէյջանի կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացուած հակաբեկչական գործողութեանը եւ դրա հետեւանքներին: Լեռնային Ղարաբաղում ճգնաժամի յաղթահարման համատեքստում Հայաստանի վարչապետը կարեւոր է համարել ՌԴ-ի հասցեական արձագանքը: Ռուսաստանի նախագահի մամուլի ծառայութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, «Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակի քննարկման ժամանակ վարչապետը փութիւն ընդգծել է բոլոր ի յայտ եկած խնդիրները կառուցողական կերպով լուծելու անհրաժեշտութիւնը՝ ռուս խաղաղապահների հետ կողմերի սերտ շփման եւ փոխգործակցութեան պայմաններում»:

Դժուար է միարժէք նշել, ՌԴ նախագահի այդ ընդգծումը վերաբերում է ռուս խաղաղապահների մեխանիզմի «անայլընտրանքայնութեանը», թէ՛ փութիւնը ակնարկում է, որ խաղաղապահների հետ աշխատանքի միջոցով հնարաւոր է չհզոքացնել

ատրպէյջանական արգելափակման հետեւանքով Արցախի մարզափրկական ճգնաժամի խորացումը: Մի բան թերեւս աներկբայ է, որ Փաշինեան-Փուլթին հեռախոսագրոցի մասին հաղորդագրութիւնները արտացոլում են երեւի թէ շատ փոքր մասը այն խօսակցութեան կամ օրակարգի, որ կարող էր լինել հեռախոսագրոցի ընթացքում, կամ նրա, ինչի համար տեղի է ունեցել այդ հեռախոսագրոցի նախաձեռնութիւնը ընդհանրապէս: Յատկանշական է, որ հեռախոսագրոցը տեղի է ունենում բաւականին աշխուժ դիւանագիտական շարժերի շրջանում: Աւելին, վերջին անգամ Փաշինեանն ու Փուլթինը խօսել էին մօտ 20 օր առաջ՝ Փետրուարի 23-ին: Ընդ որում, այն տեղի էր ունեցել դարձեալ Երեւանի նախաձեռնութեամբ: Այդ խօսակցութեան ընթացքում Հայաստանի վարչապետը փութիւնին իրազեկել էր Միւնխենի անվտանգութեան միջազգային համաժողովի շրջանակում Ալիեւի հետ հանդիպման մասին՝ ԱՄՆ հովանու ներքոյ, ինչպէս նաեւ միջազգային այլ գործընկերներին հետ շփումների մասին:

Հարկ է նկատել, որ Նիկոլ Փաշինեանը փութիւնին զանգահարել էր Գերմանիա աշխատանքային նոր այցից առաջ, որը տեղի ունեցաւ արդէն Փետրուարի 26-ին եւ որի շրջանակում Նիկոլ Փաշինեանը հանդիպեց Գերմանիայի կանցլերի եւ նախագահի հետ: Այդ այցի շրջանակում էլ կանցլեր Շուլցը հնչեցրեց Արցախի ինքնորոշման մասին յայտնի

Շար.ը էջ 15

Միջնորդը Նախ եւ Առաջ Պետք է Այցելի Ստեփանակերտ, Ոչ Թէ Երեւան Կամ Պարու

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Արցախի դէմ իրականացուած վերջին դիւերսիայով Ատրպէյջանը սպանեց երեք արցախցու՝ իրենց ծառայողական պարտականութիւնները կատարող, Արցախի անվտանգութիւնն ապահովող երեք ոստիկանի: Սակայն, ինչպէս նախկինում, այս անգամ էլ չկարողացաւ սպանել արցախցու պաշտարի կամքը: Միեւնոյն ժամանակ, իւրաքանչիւր նման գործողութեամբ նա սպանում է խաղաղութեան հասնելու յոյսերը: Սա՛ ի գիտութիւն միջազգային հանրութեան: Հաւատարիմ իր բնատուր էութեանը՝ դիւերսիայից չետոյ Ատրպէյջանը բացել է ստերի ու կեղծքիւնների հերթական պարկը: Նախ յայտարարուեց, թէ գոհուած ոստիկանների մեքենան իբր գէնք էր տեղափոխում: Յետոյ եկաւ աւելի պոչատոր ստի հերթը՝ իբր թէ Հայաստանից մի ամբողջ շարասիւն գէնք է տեղափոխուել Արցախ: Բայց սա էլ երեւի վերջը չէ, որովհետեւ յաջորդիւ Ատրպէյջանը կը յայտարարի, թէ Արցախ օդապարիկով կամ դելտապլանով է գէնք տեղափոխուում: Որոշ ժամանակ անց էլ կը խօսի այն մասին, թէ իբր գէնքը թռնելով է տեղափոխուում, յաջորդ օրերին էլ կը յայտարարի, թէ՛ յատուկ տիեզերանաւ է վարձուել, որը վայրէջք է կատարել... Ստեփանակերտի գաղտնի տիեզերակայանում, իսկ Ատրպէյջանական տիեզերական արբանեակներն էլ արձանագրել են այդ «փաստը»: Տեղեկատուական այս մարտավարութիւնն Ատրպէյջանն առաջինը չէ,

որ կիրառում է: Այն աչտօր էլ օգտագործուած է տարբեր երկրներում: Այս ստարշաւը նման է գրոհին նախորդող հրետանային նախապատրաստութեան: Դրա ամենաթարմ ապացոյցը նախ ատրպէյջանական տեղեկատուական հրետանազարկն էր հայկական դիրքերից իբր թէ ատրպէյջանական դիրքերի վրայ արձակուած կրակոցների մասին, ապա եւ՝ յարձակողական կրակոցները վերին Շորթալի հայկական դիրքերի ուղղութեամբ: Յատուկ ներկայիս եւ վաղուայ դիտորդների ու միջնորդների համար ընդգծենք, որ վերին Շորթան Հայաստանի Հանրապետութեան, ոչ թէ Արցախի տարածքում է: Թէպէտ հայկական ուղղութեամբ կրակոցների պարագայում Ատրպէյջանի համար տարբերութիւն չկայ, թէ դէպի ուր է կրակում՝ Արցախի, թէ՛ Հայաստանի դիրքերի վրայ: Ի դէպ, իսկ միջազգային դիտորդների, բանազնացների, միջնորդների համար տարբերութիւն կա՞յ, թէ որտեղ է հնչում կրակոցը: Չէ՞ որ միեւնոյն է՝ այն հնչում է ատրպէյջանական կողմից եւ հայկական դիրքերի վրայ: Ու ոչ մի կապ չունի, թէ ինչ լեզուով են խօսում կամ խօսելու դիտորդները, բանազնացները, միջնորդները, խաղաղասէրները, խաղաղարարներն ու

Շար.ը էջ 15

Հայաստանը Հնդիկ Առեւտրականներին Իրան-Սեւ Ծով Տրանսպորտային Միջանցք է Առաջարկում, Որը Կը Շրջանցի Ատրպէյճանը

Հայաստանը հնդիկ առեւտրականներին Պարսից ծոց-Սեւ ծով տրանսպորտային միջանցք է առաջարկել՝ Ռուսաստանի եւ Եւրոպայի հետ կապելու համար. գրում է The Economic Times-ը:

Առաջարկն արուել է անցեալ շաբաթ Հնդկաստան այցելած հայկական պատուիրակութեան կողմից, որի կազմում բարձրաստիճան պաշտօնեաներ ու փորձագէտներ են եղել: Այդ ընթացքում Հնդկաստանում էր նաեւ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյեանը:

Առաջարկուող միջանցքը, որը կ'անցնի Հիւսիս-Հարաւ միջազգային տրանսպորտային ճանապարհով, կը կապի Մուսպայը իրանի Բանդար Աբասի, այնուհետեւ Հայաստանի, ապա Եւրոպայի կամ Ռուսաստանի հետ՝ շրջանցելով Ատրպէյջանը, որի հետ Հնդկաստանը գաղջ յարաբերութիւններ ունի վերջինիս՝ Թուրքիայի եւ Փաքիստանի հետ սերտ համագործակցութեան ֆոնին:

Հայաստանը, որի կապերը Հնդկաստանի հետ վերջին տարիներին վերելք են ապրել՝ պայմանաւորուած յայտեղից պաշտպանական միջոցների գնմամբ ու արտահանմամբ, Հնդկաստանին ներդրումներ է առաջարկել Հայաստանի տարածքում միջանցքի կառուցման համար, The Economic

Times -ին հաղորդել են Հայաստանի կառավարութեան աղբիւրները:

«Միեւնոյն ժամանակ, Եւրոպա հասնելու համար Սուէզի ջրանցքը շրջանցող լրացուցիչ առեւտրային ճանապարհը Հնդկաստանի համար շարունակուած է անհրաժեշտութիւն մնալ: Հիւսիս-Հարաւ միջազգային տրանսպորտային ճանապարհի շուրջ քննարկումներին զուգահեռ իրանը 2016 թուականին առաջ էր քաշել նոր միջազգային տրանսպորտային միջանցքի նախագիծ՝ Պարսից ծոց-Սեւ ծով, որը պէտք է իրանը Հարաւային Կովկասով կապեր Եւրոպայի հետ: Կորոնավիրուսի համաճարակի ժամանակ բանակցութիւնները դադարեցուել են, սակայն ծրագրի բոլոր պոտենցիալ մասնակիցները՝ իրանը, Հայաստանը, Վրաստանը, Ատրպէյջանը, Պուլկարիան եւ Յունաստանը, արտադասուել են իրենց մտադրութիւնը:

Պարսից ծոց-Սեւ ծով տրանսպորտային միջանցքը տեղաւորուած է Հնդկաստանի նախագծի մէջ, քանի որ այն լրացուցիչ ուղի է նախատեսուած Եւրոպա հասնելու համար՝ շրջանցելով Սուէզի ջրանցքը եւ խուսափելով Ռուսաստան-Արեւմուտք առճակատման բացասական ազդեցութիւնից: Ինքը՝ միջանցքը, կարող է իրանը կապել Վրաստանի հետ կա՛մ Հայաստանի,

կա՛մ Ատրպէյջանի միջոցով: Հայաստանն ու Ատրպէյջանը երկաթուղային եւ մայրուղային կապ ունեն վրաստանի հետ, իսկ Ատրպէյջանն ունի երկաթգիծ մինչեւ Ատրպէյջան-Իրան սահման:

Իրանի ներսում 165 քմ. երկաթուղի էր բացակայող օղակ կայ (Ռեշտ-Աստարա գիծ)՝ Ատրպէյջանի եւ իրանի երկաթուղիները միացնելու համար: 2023 թուականի Յունուարին Ռուսաստանն ու իրանը պայմանաւորուել են սկսել շինարարութիւնը ռուսական ֆինանսաւորմամբ: Ատրպէյջանն իրանի հետ նաեւ մայրուղային կապ ունի:

Հաշուի առնելով արտերկրում խոշոր ենթակառուցուածքային նախագծերին մասնակցելու հնդկական ընկերութիւնների մեծ փորձը եւ իրանի եւ Վրաստանի տարածքով Հնդկաստան-Եւրոպա տրանսպորտային միջանցքի երթուղին գործարկելու Հնդկաստանի շահագրգռուածութիւնը՝ Հայաստանը նախատեսում է բանակցութիւններ սկսել Հնդկաստանի հետ՝ քննարկելու հնդկական ֆինանսաւորման եւ հնդկական ընկերութիւնների ներգրաւումը նախագծում: Հայաստանը տարածաշրջանում տնտեսական մեծ աճ է գրանցել՝ չնայած տարածաշրջանում տեղի ունեցած պատերազմին:

«Civic.am»



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>


(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

2000 Այցելու Եւ 120 Ընկերութիւն. Իր Պատմութեան Մէջ Ամենամեծ «Տիճիթեք»-ը



Մարտ 10-12-ին Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ կայացաւ «Տիճիթեք 2022» համաժողովը եւ համանուն ցուցահանդէսը: Ներկայացաւ 30 խօսնակ 9 երկրէ, արձանագրուեցաւ 2000 այցելու, իսկ 17-րդ ամէնամեայ ցուցահանդէսին ներկայացաւ 120 ընկերութիւն:

Մարտ 10-ին՝ համաժողովի պաշտօնական բացման ընթացքին, արհեստագիտական համայնքը ողջունեցին ՀՀ բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Խաչատրեանը, ԱՏՁՄ նախագահ Ալեքսանտր Եսայեանը, «Տիճիթեք» համաժողովի նախագահ Ռաֆֆի ԳասարՂեանը, Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Անտրէա Վիքթորինը, Հայաստանի մէջ Գերմանիոյ դեսպան Վիքթոր Ռիխթերը:

Համաժողովին ստորագրուեցաւ համագործակցութեան յուշագիր Առաջատար Արհեստագիտութիւններու Ձեռնարկութիւններու Միութեան (ԱՏՁՄ) եւ Երեւանի քաղաքապետարանին միջեւ: Երեւանի համայնքին մէջ մեծ թափով թուայնացման աշխատանքներ կ'իրականացուին, որոնք քաղաքացիներուն կեանքը թեթեւեցնելու, համայնքին հետ շփումը աւելի մատչելի դարձնելու հնարաւորութիւն պիտի տան:

Ստորագրուեցաւ նաեւ գործակցութեան յուշագիր ՀՀ տնտեսութեան, ԿԳՄՄ, ԲԱԱ նախարարութիւններու եւ SADA ընկերութեան միջեւ: Յուշագրով պետական մարմինները եւ Google Cloud-ի գործընկեր SADA-ն կը համատեղեն ջանքերը՝ Հայաստանի մէջ կրթութեան հաւասար հնարաւորութիւններու, կրթական համակարգի թուայնացման զարգացման համար՝ Google Workspace for Education Fundamentals ծառայութիւններու եւ գործիքակազմի ներդրման ուղղութեամբ: Փաստաթուղթը ստորագրած են մէկ կողմէ նախարարներ Վահան Քերոբեանը, Ռոպերթ Խաչատրեանը, փոխնախարար Արայիկ Խզմալեանը, միւս կողմէ՝ SADA ընկերութեան նախագահ, գործադիր տնօրէն Թոնի Սաֆոյեանը:

Ստորագրուեցաւ նաեւ գործակցութեան յուշագիր ՀՀ տնտեսութեան, ԿԳՄՄ, ԲԱԱ նախարարութիւններու եւ SADA ընկերութեան միջեւ: Յուշագրով պետական մարմինները եւ Google Cloud-ի գործընկեր SADA-ն կը համատեղեն ջանքերը՝ Հայաստանի մէջ կրթութեան հաւասար հնարաւորութիւններու, կրթական համակարգի թուայնացման զարգացման համար՝ Google Workspace for Education Fundamentals ծառայութիւններու եւ գործիքակազմի ներդրման ուղղութեամբ: Փաստաթուղթը ստորագրած են մէկ կողմէ նախարարներ Վահան Քերոբեանը, Ռոպերթ Խաչատրեանը, փոխնախարար Արայիկ Խզմալեանը, միւս կողմէ՝ SADA ընկերութեան նախագահ, գործադիր տնօրէն Թոնի Սաֆոյեանը:

Այս Է Փտածութեան Դէմ Պայքարը, Ուր Չկան Քաղաքական Խուճի Անդամներուն Զամար Այլ Երաշխիքներ. Գրիգոր Մինասեան

Քովիտ-19 համավարակի չարաշահումներու գործով կալանաւորուած է Երեւանի փոխքաղաքապետ, 2020-2022 թուականներուն ՀՀ առողջապահութեան նախարարի տեղակալ Գրիգոր Մինասեանը:

Այդ ժամանակուայ առողջապահութեան նախարար եւ այժմ Ազգային ժողովի իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Արսէն Թորոսեանը յայտնած է, որ զինք չեն կանչած հարցաքննութեան, իսկ պետական համակարգին մէջ կան թերութիւններ.

ՀՀ արդարադատութեան նախարար Գրիգոր Մինասեան այս կապակցութեամբ ըսած է. որ ինք կարգացած է Արսէն Թորոսեանի յայտարարութիւնները, ուր ան կը բարձրաձայնէր այդ հարցը, որ այդ հրամանները իր օրօք եղած են, եւ նոյնիսկ կը խնդրէր, որ ինք ներգրաւուի, եւ այդ առումով բնական է, որ այս կամ այն ձեւով ներգրաւուած է:

Իսկ այն հարցին, թէ արդեօք կը համապատասխանէ իրականութեան լրատուամիջոցներուն մէջ շրջանառուող այն լուրը, թէ Գլխաւոր դատախազին դիմում պիտի ներկայացուի Թորոսեանի նկատմամբ հանրային քրէական հետապնդում սկսելու եւ անձեռնմխելիութենէն զրկելու համար, Գրիգոր Մինասեանը պատասխանեց, որ ինք չունի նման տեղեկութիւններ, եւ չաւելցց, որ այդ ամէնը նախաքննութեան գաղտնիքի ծիրին մէջ է:

Ինչ կը վերաբերի հարցին, թէ



ՀՀ արդարադատութեան նախարար Գրիգոր Մինասեան

իշխանութիւնը կը պայքարի փտածութեան դէմ, սակայն 11 անձ 26 միլիարի իւրացման մէջ կը մեղադրուի, նախարարը ըսաւ. «Սա է փտածութեան դէմ պայքարը, որտեղ չկան իւրացիւններ, որտեղ չկան քաղաքական խմբում գտնուող մարդկանց կամ պաշտօնեաների համար ա չլ երաշխիքներ, այլ իրաւունքներ, քան ուրիշ քաղաքացիների համար: Ես մենակ ուրախ եմ, որ նման քննարկումներ կան, եւ նման քրէական վարույթներով ամբողջ պետական համակարգը, համայնքային աշխատողները, բոլորը հասկանում են, որ փտածութեան դէմ անգիջում պայքար է, եւ չկայ իւրացին ու ոչ-իւրացին: Ու եթէ մարդը կատարել է յանցագործութիւն, ինքը պատժուելու է մեր երկրում»:

Հայաստան Պատուիրած Է Հնդկական «Marg 155/39» Ինքնագնաց Հաուպիցներ



Հայաստանը Kalyani Strategic Systems Limited (KSSL) ընկերութեան կողմէ մշակուած 155 մմ/39 ինքնագնաց MARG հաուպիցներու փորձարկումներ կատարած է՝ նախքան սպառազինութիւնը պատուիրելը: Այս մասին յայտնած է «Indianndian Defence Research Wing»-ը:

«Kalyani Strategic Systems Limited ընկերութեան պաշտօնատար անձեր յայտարարած են, որ «Marg 155/39» ինքնագնաց հաուպիցը մշակուած է 8 ամսուան մէջ եւ փորձարկուած է հնդկական բանակին կողմէ Պալասորի եւ Փոքրանի մէջ, նախքան այն առաջարկուած էր Հայաստանին, որ սպառա-

զինութեան համակարգ կը փնտռէր բարձր լեռնային շրջաններուն մէջ ռազմական գործողութիւններ իրականացնելու համար, ուր Ատրպէյճանի հետ հակամարտութիւնը կը շարունակուի», կը գրէ «IDR W»-ն:

Ինքնագնացի վրայ տեղադրուած «MARG 155/39» հաուպիցը մօտ 40 օրուան ընթացքին կրկին փորձարկուած է Հայաստանի պաշտօնեաներուն ներկայութեամբ, եւ գործարքը կնքուած է պաշտպանական ոլորտի ցուցահանդէսին մէջ այն բանէն յետոյ, երբ այն համապատասխանած է հայկական բանակին կողմէ սահմանուած հրաձգութեան բոլոր չափանիշերուն:

Հայաստան Դրամական Փոխանցումները Հասած Են 5 Միլիառ Տոլարի

Տնտեսագէտ Սուրէն Պարսեանը Ֆէյսբուքի իր էջով գրած է.

«Հայաստանի Դրամատունը ի Միութիւնը հրապարակել է 2022 թուականի ընթացքում ՀՀ դրամատնային համակարգի միջոցով ֆիզիքական անձանց փոխանցումները դէպի Հայաստան ըստ երկրների: Տուեալներից պարզ է դառնում, որ 2022 թուականին փոխանցումների հոսքը աւելացել է 2,5 անգամ կամ մօտ 3 միլիառ տոլարով: Հիմնական նուիրատու երկրներ են հանդիսացել ՌԴ, ԱՄՆ, Գերմանիան, Ֆրանսան, Ղազախստանը եւ այլն:

Պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ 2022 թուականի Յունուար-Դեկտեմբեր ամիսներին Հայաստան են այցելել 790.397 ռուս զբօսաշրջիկներ, որոնց թիւը նախորդ տարուայ համեմատ 2,2 անգամ աւելի շատ է: Ռուս զբօսաշրջիկներից մօտ 60 հազարը մնացել է Հայաստանում, ինչը նպաստել է Ռուսաստանից եկող դրամական հոսքերի կտրուկ աւելացմանը:



ԱՄՆ-ից, Գերմանիայից եւ Ֆրանսայից փոխանցումները պայմանաւորուած են շարունակուող արտագաղթով:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Չէ Քննարկած Ատրպեյճանի Կազմին Մեջ Արցախի Համարկման Հարց. ՀՀ ԱԽ Քարտուղար

«Ազատութիւն» ռատիօկայանին տուած հարցազրոյցին ընթացքին այս մասին ըսած է Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը՝ անդրադառնալով այն հարցին, թէ Պաքուն կը պնդէ, որ այդ երկխօսութեան օրակարգին մէջ պէտք է ըլլայ Ղարաբաղի հայերու համարկման հարցը, եւ յայտնի է՝ Ստեփանակերտը կը մերժէ:



Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

«Մենք այդպիսի հարց չենք քննարկել: Բոլորն էլ հրապարակային խօսել են, որ այդ քննարկումները իրաւունքներն են անվտանգութեան մասին են, եւ միջազգային պայմանաւորութիւնները հէնց սրանք էին, եւ հէնց այս պայմանաւորութիւնները պէտք է ի կատար ածուեն», ըսած է Գրիգորեան:

նարդիւնքը, ապա այդ բանակցութիւնները դժուար յառաջ պիտի երթան, որովհետեւ Լեռնային Ղարաբաղն ալ կրնայ յայտարարել իր ակնկալիքները վերջնարդիւնքներուն մասին:

Հարցին, թէ Երեւանի դիրքորոշումն է, որ պէտք է քննարկուի, ԱԽ քարտուղարը պատասխանած է.

«Դրա համար որպէսզի բանակցութիւնները տեղի ունենան, պէտք է հնարաւորութիւն ստեղծել քննարկումների մասին, եւ պէտք է մնալ պայմանաւորութիւնների շրջանակում, որովհետեւ մենք պայմանաւորուել ենք քննարկելու անվտանգութիւն եւ իրաւունքներ», եզրափակած է Գրիգորեան:

«Երեւանի դիրքորոշումն է, որ քննարկուի այն, ինչ պայմանաւորուել ենք, այսինքն՝ իրաւունքներ եւ անվտանգութիւն միջազգային մեխանիզմի շրջանակներում»:

Գիտարկմանը, թէ ըստ Ատրպեյճանի՝ այդ կրնայ ենթադրել համարկում, Գրիգորեան ընդգծած է, որ եթէ կը կանխորոշուի վերջ-

Ստեփանակերտի Մեջ Կը Բացառեն Պաքուի Հետ Համարկման Հարցերու Քննարկումը

Ստեփանակերտէն կը մերժեն վերահամարկման շուրջ Պաքուի մէջ քննարկումներ կատարելու Ատրպեյճանի իշխանութիւններուն առաջարկը: Ատրպեյճանի իշխանութիւնները Արցախի ներկայացուցիչները հրաւիրած էին Պաքու՝ վերահամարկման շուրջ հերթական քննարկումներ կատարելու համար:

վի նախագահ Սէյրան Հայրապետեան «Ազատութեան» փոխանցեց, որ կը բացառեն Պաքուի առաջարկին ընդունումը: Արցախի անկախութիւնը այլընտրանք չունի, իսկ հանդիպման պատրաստ են, եթէ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանին հանդիպման հրաւիրէ 3-րդ երկիր՝ Արցախի ինքնորոշման հարցը քննարկելու օրակարգով:

«Ատրպեյճանի նախագահին վարչակազմը երկրորդ հանդիպման կը հրաւիրէ Ղարաբաղի հայ համայնքի ներկայացուցիչները՝ շարունակելու շփումները վերահամարկման, ինչպէս նաեւ Ղարաբաղի մէջ ենթակառուցումներ քննարկելու համար: Կ'առաջարկուի յառաջիկայ օրերուն հանդիպում կատարել Պաքու քաղաքին մէջ», ըսուած է նախագահ Ալիեւի վարչակազմին տարածած պաշտօնական հաղորդագրութեան մէջ:

«Հարցադրումը միանգամից մերժման ենթակայ է՝ համարկման, վերահամարկման: Ինչի մասին է խօսք գնում, գէնքը ձեռքներին մեր վրայ պահած համարկում են պարտադրում, չկայ այդպիսի եզրույթ: Մենք կարող ենք ոչ թէ բանակցել՝ վերահամարկուելու կամ համարկուելու, ինչպէս իրենք են ասում, այլ մենք պէտք է բանակցենք մեր ինքնորոշման ճանաչման եւ միւս հարցերով որպէս հաւասարը հաւասարի հետ», ըսաւ Հայրապետեան:

Թէ ինչո՞ւ հանդիպման վայր ընտրուած է Պաքուն, ատրպեյճանական կողմը չէ մանրամասնած:

Սէյրան Հայրապետեան տեղեկացուց, որ Արցախի խորհրդարանական ուժերը յայտարարութիւն պիտի տարածեն՝ իրենց տեսակէտը ներկայացնելով Պաքուի առաջարկին շուրջ:

Թէեւ Արցախի նախագահին գրասենեակը պաշտօնական որեւէ յայտարարութիւն չըրաւ, բայց խորհրդարանի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան Յանձնաժողով-

«Ատրպեյճանի եւ Հայաստանի Միջեւ Խաղաղութեան Հասնելու Համար Որեւէ Խոչընդոտ Չկայ». Ալիեւ

Ատրպեյճանի եւ Հայաստանի միջեւ խաղաղութեան հասնելու համար որեւէ խոչընդոտ չկայ: Մարտ 9-ին յայտարարած է Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Պաքուի մէջ կայացող «Խաղաղութիւնը այսօր. մարտահրաւէրներ եւ յոյսեր» թեմայով 10-րդ համաշխարհային համաժողովի բացման արարողութեան:

«Այն, ինչ համաձայնեցուած է Ատրպեյճանի եւ Հայաստանի միջեւ անցեալ տարուան Հոկտեմբերին, մասնաւորապէս, միմեանց ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան նկատմամբ յարգանքի առումով, փաստօրէն ցոյց կու տայ, որ խաղաղութեան հասնելու համար որեւէ խոչընդոտ չկայ», ընդգծած է Ալիեւ:

ԱՄՆ Հետախուզական Ծառայութիւնները Նշած Են «Հայաստանի Դէմ Ռազմական Ծնշում Գործադրելու Պաքուի Պատրաստակամութիւնը»

Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ շարաբերութիւնները «հաւանական է, որ մնան լարուած եւ անկայուն խաղաղութեան պայմանագրի բացակայութեան պարագային», կը կանխատեսեն ԱՄՆ հետախուզական ծառայութիւնները:



ԿՀՎ-ի, ՀԴԲ-ի, Պաշտպանութեան Հետախուզական Գործակալութեան եւ Ազգային Անվտանգութեան Գործակալութեան ղեկավարները Գոնկընսին ներկայացուցած են իրենց ամէնամեայ Համաշխարհային վտանգներու վերանայումը:

տական սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ պարբերաբար ռազմական բախումներ տեղի կ'ունենան: Աւելի բուռն բռնկումը տեղի ունեցած է 2022 թուականի Սեպտեմբերին, երբ ատրպեյճանական ուժերը համակարգուած յարձակում սկսած են սահմանի երկայնքով քանի մը վայրերու մէջ՝ գրաւելով հայկական տարածքի մէկ մասը, որուն հետեւանքով գոհուած է գրեթէ 300 զինուոր:

Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ հակամարտութեան վերաբերեալ զեկոյցին հեղինակները կը նշեն միջպետական սահմանին գիտութեամբ անհասկանալի անձակատումը, զինադադարի մեխանիզմի բացակայութիւնը եւ «Հայաստանի հետ բանակցութիւններուն մէջ իր նպատակներուն հասնելու համար ռազմական ճնշում գործադրելու Ատրպեյճանի պատրաստակամութիւնը»:

«Խաղաղ բանակցութիւններուն մէջ որոշակի յառաջընթաց արձանագրուած է, սակայն պետական սահմաններուն եւ Լեռնային Ղարաբաղի ապագային հետ կապուած ամենաբարդ հարցերը հեռու են լուծուելէ», կ'ըսուի գ

«Սահմանին մօտ գիտուած ուժերու առկայութիւնը կը մեծցնէ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ գիտուած անձակատման վտանգը, թէեւ նման բախումները, ամենայն հաւանականութեամբ, պիտի ըլլան սահմանափակ տեւողութեամբ եւ ուժգնութեամբ», կ'ըսուի զեկոյցին մէջ:

Ուղերձին մէ՛ կը յիշեցուի, որ 2021 թուականի Մայիսին միջպե-

Հայաստան Հրաժարած Է ՀԱՊԿ Գլխաւոր Քարտուղարի Տեղակալի Իր Բաժինէն

Հայաստան հրաժարած է Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղարի տեղակալի իր բաժինէն, «Ազատութեան» հաստատեց Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան մամուլի խօսնակ Վահան Յունանեան:

ՀԱՊԿ-էն պահանջած էր դատաւարուել 2022-ի Սեպտեմբերին Ատրպեյճանի ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք: Այս պահանջը ՀԱՊԿ չկատարեց: Տարեկիզբին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ասուլիսի ժամանակ յայտնեց, որ ՀԱՊԿ գորավարութիւններ այս տարի Հայաստանի մէջ պիտի չկայանան՝ պարզաբանելով, որ ՀԱՊԿ-էն դեռ յստակ զնահատականներու կը սպասեն՝ հասկանալու, թէ որն է դաշինքի պատասխանատուութեան գօտին:

Յունանեան միեւնոյն ժամանակ զերծ մնաց մեկնաբանելէ հրաժարելու պատճառը:

Հայաստանը բազմիցս յայտարարած է դաշինքէն իր դժգոհութիւններուն մասին. Հայաստանը

Ըստ «Freedom House»-ի Հայաստան Կը Դասուի Մասամբ Ազատ Երկիրներու Շարքին

Freedom House միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակած է «Ազատութիւնը աշխարհի մէջ 2023» տարեկան զեկոյցը: Այս զեկոյցին մէջ կը զնահատուի աշխարհի մէջ քաղաքական իրաւունքներու եւ քաղաքացիական ազատութիւններու վիճակը: Ըստ զեկոյցին՝ Հայաստանի վարկանիշը 2022 թուականին գնահատուած է 54՝ 100 պալանոց սանդղակով: Նախորդ տարուան զեկոյցին մէջ Հայաստանը հաւաքած էր 55 միւսերը: Այսպիսով, Հայաստանը կը շարունակէ դասուիլ «մասնակի ազատ» երկիրներու շարքին:



Թողած են Հայաստանի ժողովրդավարական յետադիժին վրայ եւ արժանի են յատուկ քննութեան 2023 թուականին. «ատրպեյճանական ուժերը շարունակած են յարձակումները եւ գրաւած են հայկական տարածքներ սահմանի երկայնքով՝ սպառնալով Երեւանի ժողովրդավարական իշխանութեան եւ մեծցնելով լայնամասշտաբ պատերազմի վտանգը»:

Զեկոյցին մէջ, մասնաւորապէս, կ'ըսուի, որ ատրպեյճանական սեպտեմբերեան յարձակումները Հայաստանի ինքնիշխան տարածքին վրայ զգալի ազդեցութիւն

ՀԿԲՄ-ի Կրթանպաստներու Ծրագիրը Սկսած Է ԸՆԴՈՒՆԻԼ 2023-2024 Տարեշրջանի Դիմումները


Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) կրթանպաստներու Յանձնախումբը հաճոքով կը յայտարարէ որ, պիտի ընդունի 2023-2024 տարեշրջանի կրթանպաստներու դիմումները սկսեալ Ապրիլ 1, 2023-էն:

Անհատական կրթանպաստներ՝ Իւրաքանչիւրը մինչեւ 2000 տոլար, պիտի յատկացուին արժանի ուսանողներու, որոնք կը յաճախեն քառամեայ համալսարաններ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ: Դիմողները պէտք է ըլլան հայկական ծագումով, ունենան նուազագոյնը 3.5 GPA, եւ գործունեայ ըլլան հայկական կազմակերպութիւններէն ներս:

Պայմանները լրացնող ուսանողները կրնան այցելել <https://aebu.org/our-programs/scholarship/> կայքը՝ չաւելեալ տեղեկութիւններ եւ դիմումագրեր ստանալու համար:

Դիմումները պէտք է ներկայացուին առցանց կամ նամակատան միջոցաւ մինչեւ Յունիս 30, 2023: Նամակով դիմումները պէտք է ուղարկուին՝ AEBU Scholarship Committee, 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104: Նաեւ կարելի է հեռաձայնել 626-344-7321 թիւին՝ չաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար:

ՀԿԲՄ իր տարեկան նպաստները կը յատկացնէ մրցակցային հիմունքներով եւ վերաքննութենէ ետք: Կրթանպաստի արժանացած



ուսանողներու անունները պիտի յայտարարուին առցանց՝ մինչեւ Օգոստոս 1, 2023: Կրթանպաստներու յանձնարարական արարողութիւնը տեղի պիտի ունենայ Օգոստոս 27, 2023-ին՝ ծնողներու եւ Միութեան բարեկամներու ներկայութեան:

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը հիմնուած է 1969-ին խումբ մը նուիրեալներու կողմէ, որոնք հաւատացած են կարիքաւոր ուսանողներուն օգտակար դառնալու առաքելութեան: Մենք կը հաւատանք, որ ուսանողական նպաստները կարեւոր ներդրումներ են մեր երիտասարդներու կրթութեան՝ կերտելու համար աւելի փայլուն ապագայ մը:

Մեր ծրագիրներուն օժանդակելու համար կը խնդրենք այցելել <https://aebu.org/donate/> կայքէջը:

Ֆրենք Փալոնը Ներկայացուցիչներու Պալատին Կոչ Ըրած Է 100 Միլիոն Տոլար Յատկացնելու Հայաստանին Եւ 50 Միլիոն Տոլար՝ Արցախին

ԱՄՆ Գոնկրէսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահ Ֆրենք Փալոնը Ներկայացուցիչներու Պալատի իր գործընկերներուն կոչ ըրած է 100 միլիոն տոլար յատկացնելու Հայաստանին եւ 50 միլիոն տոլար՝ Արցախին: Ֆրենք Փալոնը նամակով դիմած է Ներկայացուցիչներու Պալատի Արտաքին Գործողութիւններու Յատկացումներու Ենթախանութիւնի նախագահ Մարիօ Տիաս-Պալարթին եւ բարձրաստիճան անդամ Պարպարա Լիին, որուն մէջ կոչ ըրած է նաեւ 2 միլիոն տոլար յատկացնելու ականազերծման աշխատանքներու համար եւ ապահովելու «Ազատութեան աջակցութեան օրէնքի» 907-րդ յօդուածին կատարումը, որով կը սահմանափակուի ԱՄՆ-ի կողմէ Ատրպէյճանի կառավարութեան տրամադրուող ռազմական օգնութիւնը, ինչպէս նաեւ ճնշում գործադրելու Ատրպէյճանի վրայ, որպէսզի վերջինս ազատ արձակէ հայ ռազմագերիները, որոնք պէտք

է ազատ արձակուէին 2020 թուականի Նոյեմբերին ստորագրուած եռակողմ յայտարարութեան համաձայն:

Փալոնը իր նամակին մէջ նաեւ ուշադրութեան հրաւիրած է Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի անմարդկային եւ անօրինական շրջափակման վրայ, որ կը շարունակուի արդէն երեք ամիսէ: Նամակին մէջ ընդգծած է, որ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը կը գտնուի մարդասիրական ճգնաժամի եզրին, որ կը սպառնայ երկարաժամկէտ հետեւանքներ ունենալ տարածաշրջանի անվտանգութեան համար:

Նամակին մէջ կը նշուի, որ Լաչինի միջանցքը արգելափակելու եւ բժշկական, սնունդի եւ առաջին անհրաժեշտութեան ապրանքներու հասանելիութեան շարունակական սահմանափակումը յառաջացուցած են «անյաղթահարելի կարիքներ», ուստի այսօրուան դրութեամբ ԱՄՆ կառավարութեան կողմէ տրամադրուող օգնութիւնը լիովին անբաւարար է:

Արցախ Կը Հերթէ

Շարունակուած էջ 1-էն
պարհով ուղեկցած են դէպի Հայաստանի Հանրապետութիւն:

Հաշուի առնելով այդ ճանապարհին լեռնային ու խիստ դժուարանցանելի բնոյթը՝ Արցախի փրկարարները ստիպուած էին Ուազին քաղաքներով կազմակերպել

քաղաքացիներուն փոխադրումը: Իսկ ռուս խաղաղապահները կատարած են իրենց գործառնութիւնները՝ ապահովելու համար քաղաքացիական անձերուն անվտանգութիւնը, առաւել եւս՝ Մարտ 5-ի յարձակումէն յետոյ յառաջացած չաւելեալ վտանգներու պայմաններուն մէջ:

Ոչ Եւ Է Ծանօթ Բարերար Նազարէր Գեւորեան

Խոր ցաւով վերահասու եղանք ազգային ծանօթ անձնաւորութիւններէն՝ Տիար Նազարէր Գեւորեանի մահուան: Իր անվերադարձ մեկնումը մեծ կորուստ մըն է գաղութիս բոլոր շրջանակներուն համար: Արդարեւ, հանգուցեալը իր ջերմ հայրենասիրութեամբ ու բարեգործութիւններով, կը վայելէր իր ազգակիցներու անվերապահ սէրն ու համակրանքը:



Ն. Գեւորեան երբեք չէ զլացած իր աջակցութիւնը բերելու հայապահպանման սատար հանդիսացող սփռուքահայ ընկերային, կրթական, մշակութային ու բարեսիրական հաստատութիւններուն, առանց մոռնալու նաեւ մեր մամուլն ու Հայաստանի տարբեր կառույցները:

Յաւերժի ճամբորդ Նազարէր Գեւորեանի բազմաբնոյթ ներդրումները կը մնան յիշարժան եւ օրինակելի բոլոր անոնց՝ որոնք գիտակցութիւնն ունին իրենց ինքնութեան:

Այս տխուր առիթով մեր խորագաց վշտակցութիւնները հանգուցելի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ բարեկամներուն:

Բիւր խոնարհում իր անմեռ յիշատակին Հանգիստ իր հոգնաբեկ աճիւններուն:

«Մասիս» Շաբաթաթերթ
Նոր Սերունդ Մշակութային Միութիւն
Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւն

Ընկեր Յակոբ Խաչոյեանի Մահը

Խոր ցաւով իմացանք մահը՝ Ընկեր Յակոբ Խաչոյեանի, որ պատահած է Մարտ 13, 2023-ին՝ յետ կարճատեւ հիւանդութեան:



Ընկեր Խաչոյեան եղած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հաւատաւոր անդամներէն՝ Դամասկոսէն մինչեւ Ամերիկա:

Ան երկար տարիներ վարած է բազմաթիւ պաշտօններ, յատկապէս մեր մարզական կառույցէն՝ ՀՄՄ-էն ներս՝ հաւատարմով նոր սերունդի առողջ եւ հայցեցի դաստիարակութեան գործին:

Այս տխուր առիթով մեր բոլոր շրջանակի անունով խորագաց ցաւակցութիւններ կը յայտնենք հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն եւ համայն պարագաներուն:

«ՄԱՍԻՍ»

Վարչապետի Մամլոյ Ասուլիսի Հետքերով

Շարունակուած էջ 1-էն

լով իրենց տարեկան գեկոյցը զգուշացուցին, որ Հայաստանի հետ բանակցութիւններուն մէջ իր նպատակներուն հասնելու համար Ատրպէյճան պատրաստ է ռազմական ճնշում գործադրելու: Նման վտանգի մասին խօսեցաւ նաեւ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայս Յայնատրպէյճանական սահմանին տիրող իրավիճակը բնութագրելով որպէս՝ «նուրբ՝ հակուած բռնութեան աճի»:

բանակը նոր ու արդիական զենքերով օժտելու մասին երեւան կը շարունակէ լուռ մնալ, մինչ նոր զինատեսակներու գնման մասին մնայուն տեղեկութիւններ կը հաղորդեն Յնդկական մամուլն ու այլ աղբիւրներ: Թէ այդ զենքերը երբ պիտի հասնին եւ դրուին օգտագործման մէջ կը մնայ պետական գաղտնիքի ժիրին մէջ: Սէկ բան յայտնի է որ, այս տարուայ պիտոճեով բանակին յատկացուած է 1.2 միլիար տոլար, որ անմախքն է Հայաստանի պատմութեան մէջ:

Վարչապետի ասուլիսի եզրակացութիւնը այն է թէ, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը նահանգի մէջ է, փոխարէնը անելի մօտ է նոր պատերազմի հաւանականութիւնը:

Վարչապետի ասուլիսի եզրակացութիւնը այն է թէ, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը նահանգի մէջ է, փոխարէնը անելի մօտ է նոր պատերազմի հաւանականութիւնը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Այժմ Շատ Մեծ Է Մազլցումի Զաւանականութիւնը

Շարունակուած էջ 1-էն

է լինեն սահմանի երկու կողմերից, կամ շփման գծի երկու կողմերից, ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Ատրպէյճանի: Ընդ որում, Ատրպէյճանի նախագահը Ֆրանսայի նախագահի եւ ԵՄ խորհուրդի նախագահի ներկայութեամբ համաձայնուեց, բայց հետագայում հրաժարուեց այդ տարբերակից», յաւելեց վարչապետը:

Հայաստանի ինքնիշխան տարածքի աւելի քան 150 քմ քառակուսին բռնագրաւուած է Ատրպէյճանի զօրքերուն կողմէ, եւ միջազգային հանրութիւնն ու Ռուսիան ոչինչ կրնան ընել այս խնդիրը լուծելու համար: Այս մասին, մամուլի ասուլիսին ընթացքին, դիմելով վարչապետ Նիկոլ Փաշինեանին, ըսաւ «Ա1+»-ի լրագրողը եւ փափաքեցաւ իմանալ, թէ ինչպէս պէտք է խնդիրը լուծուի:

Ի պատասխան՝ վարչապետը, ինչպէս արդէն ըսած էր բացման խօսքին մէջ, կրկնեց. «Այդ խնդիրների 1-քայլանի լուծում չեմ պատկերացնում: Մեր փորձը մեզ պէտք է ցոյց տա, որ պէտք է ինչ «ափալ-թափալ» քայլեր, պէտք է հետեւողական, ռազմավարական մօտեցմամբ գնալ առաջ՝ մեր պետութեան շահերը ապահովելու եւ սպասարկելու համար»:

Վարչապետը յիշեցուց, որ ՀՀ տարածքային ամբողջականութիւնը, ինքնիշխանութիւնը եւ անկախութիւնը կարմիր գիծ է. «Բայց նաեւ մենք այդ խնդիրների ռազմավարական լուծում ենք պատկերացում՝ երկարաժամկէտ, խորը եւ համապարփակ»:

«Հայաստանի Հանրապետութիւնը բռնատարուած տարածքներ ունի 1994 թուականից ի վեր», ընդգծեց վարչապետը:

«Շատ յաճախ մեր հանրային հարթակներում, ընկերային ցանցերում որպէս անզգանգ ներկայացուած է, թէ ան տեսէք՝ Հայաստանի կառավարութիւնը պատրաստուած է ինչ-որ թուղթ ստորագրել: Ես ուզում եմ ձեզ հաստատեցնել, որ եթէ մենք ունենանք իրավիճակ, որ մնացել է 1, 2, 3 օր, որ մենք ինչ-որ թուղթ ենք ստորագրելու, դա իրականում շատ լաւ նորութիւն է, որովհետեւ դա կը նշանակի, որ բանակցային գործընթացում ունեցել ենք յառաջընթաց եւ հասել ենք արդիւնքի, որը մեր երազանքների արդիւնքը չէ, բայց որը այնուամենայնիւ արդիւնք է, որը պիտի ապահովի երկարաժամկէտ խաղաղութիւն, կայունութիւն եւ զարգացում», յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ պատասխանելով «Արմենփրես»-ի լրագրողի հարցումին:

Վարչապետը յիշեցուց, որ Փետրուարի կէսերուն հայկական կողմը իր հերթական արձագանգը խաղաղութեան պայմանագրի հնարաւոր նախագիծին վերաբերեալ փոխանցած է Ատրպէյճանին եւ 2-3 օր առաջ ստացած է Ատրպէյճանի արձագանգը. «Պէտք է ընդգծել, որ որոշակի յառաջընթաց մենք տեսնում ենք, բայց ինչքան տեսնում ենք յառաջընթաց, այնքան ի յայտ են գալիս էական խնդիրներ»:

Անոր խօսքով՝ Ատրպէյճանը կը փորձէ խաղաղութեան հնարաւոր պայմանագրի միջոցով ՀՀ-ին տարածքային պահանջներ կամ նկրտումներ ձեւակերպել, ինչ որ կարմիր գիծ է մեզի համար: «Ատրպէյճանը փորձում է նաեւ ԼՂ-ի մէջ

ցեղասպանութեան մանտաթ ձեռք բերել այդ շարքին՝ Հայաստանի ստորագրութեամբ: Դա նոյնպէս կարմիր գիծ է մեզ համար», ընդգծեց վարչապետը:

Նիկոլ Փաշինեան նշեց, որ Ատրպէյճանը կը հետապնդէ այնպիսի գիծ, որ նոյնիսկ ստորագրուած պայմանագրի կատարման երաշխիքներու համակարգ մենք չունենանք. «Այսօր մենք ունենք գրուած, ստորագրուած, հրապարակուած փաստաթուղթ, որը չի կատարուած: Խօսքը 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան մասին է»:

120 հազար բնակչութիւն ունեցող Արցախը կրնա՞յ իրաւահասարակ պայմաններում մէջ Ատրպէյճանի հետ երկխօսիլ, այն պարագային, երբ Ատրպէյճանը մտադիր է ցեղասպանութիւն իրականացնել Արցախի մէջ, ցեղասպանը կրնա՞յ երկխօսիլ ցեղասպանողին հետ: Արդեօք սա քոյածածկոյթ է, որպէսզի ՀՀ-ն իրեն դիտորդի դերին մէջ դնէ եւ չխառնուի գործընթացներուն: Լրագրողներուն հետ հանդիպման ժամանակ իրեն ուղղուած յիշեալ հարցումին Նիկոլ Փաշինեանը այսպէս պատասխանեց. «Ձեր նշած հարցի պատճառով է, որ մենք կարեւոր ենք համարում միջազգային մեխանիզմի գոյութիւնը: Մենք դիրքորոշումներ ենք արձանագրում եւ պայմանաւորուածութիւններ, որոնք փորձում ենք իրականացնել: Եթէ ձեր ասած տրամաբանութեամբ գնանք, նայէք Ատրպէյճանի ռազմական պիւտճէն եւ ընդհանրապէս՝ պիւտճէն, եւ ՀՀ-ի պիւտճէն: Նայէք Ատրպէյճանի եւ ՀՀ-ի բնակչութեան քանակին, նայէք Ատրպէյճանի եւ ՀՀ-ի արտաքին պահեստներին, Ատրպէյճանի դաշնակիցների եւ մեր դաշնակիցների յուսալիութեանը: Եթէ այդ տրամաբանութեամբ գնանք, զուտ ֆիզիքայէս, թուաբանականօրէն, Հայաստանի ներգրաւուածութիւնն էլ չի բաւարարում՝ լուծելու այդ անհասարակ շրջանակներում հարցը: Որովհետեւ էլի մի կողմից 120 հազար, միւս կողմից՝ մօտ 9 միլիոնն է ստացուած (Ատրպէյճանի բնակչութեան թիւն է 9 մլն): Դրա համար է, որ ուզում ենք միջազգային երաշխիքներ գործարկուեն»:

Ըստ վարչապետին՝ ՀՀ-ն Լաչինի միջանցքի ապօրինի փակման հետեւանքով յառաջացած մարդասիրական ճգնաժամը միջազգային հանրութեան համար տեսանելի դարձնելու ուղիներ կը փնտռէ: Ինչ կը վերաբերէ Արցախը անկիւն մղելուն եւ մենակ թողելուն, ապա վարչապետը հարցադրում ըրաւ՝ ո՞վ դիմած է Արդարադատութեան Միջազգային Դատարան, որ Լաչինի միջանցքին վերաբերեալ կայացուցած է շատ կարեւոր որոշում: «Եթէ ՀՀ-ն մենակ թողնէր ԼՂ-ին, չէր դիմի՝ Արդարադատութեան Միջազգային Ատեան», նկատեց Փաշինեան՝ միաժամանակ յաւելելով, որ «մենակ ձգուած» Արցախին ՀՀ պետական պիւտճէն ֆինանսական մեծ միջոցներ յատկացուած են ԼՂ-ին:

«Խնդիրը Արցախին մենակ թողնել-չթողնելու մասին չի: Մենք Արցախը մենակ չթողնելու եւ Արցախի փոխարէն էլ խօսելու վերանգրի ներքոյ խնդիր ենք ստեղծել ե՛ւ Արցախի, ե՛ւ ՀՀ-ի համար: Սա է նրբութիւնը՝ ԼՂ-ին բանակցային գործընթացից դուրս

դրանց թւում հնդկական՝ «Մատրասեան տաճարը», «Նագուրան», «Արջուկ», ճաբոնական՝ «Կոկէ կօ նիվա», «Ֆանտազիա ըստ ճաբոնական փայտագրութիւնների», յունական, քորէական, չինական, օսեթական, քրտական, հավայեան կղզիների բնիկների: Իսկ հայկական ոճի գործերի թիւն անցնում է 50-ից:

Մեծահամբաւ երաժիշտը մայր հայրենիք այցելել է ընդամէնը մէկ անգամ՝ 1965-ին, ծանօթացել իր գործընկերներին, ստեղծագործութիւնները նուիրաբերել Չարենցի անունան հրականութեան եւ արուեստի թանգարանին եւ վերադարձել Ամերիկա: Հայաստանի անկախացումից յետոյ նրա ուսերին արդէն ծանրացել էր ծերունական տարիքի բեռը եւ անկարող էր կրկին այցելել արեւոտ իր երկիր: Բայց «որոնող» մեծ հայր հայրենիք վերադառնալու այլ ճանապարհ էր գտնելու՝ գրելու էր Արցախեան ազատամարտի հայ քաջագուններին նուիրուած «Արցախ» սիմֆոնիան: 80-ամեայ մասետրոն Քարենկի Հոլում մեծ շուքով նշուող իր յօբեյանական կալա համերգի ժամանակ դեկավարելու էր իր նոր սիմֆոնիայի համաշխարհային պրեմիերան:

«...Նրա երաժշտութեան բարձր որակն ու ներշնչանքի մաքրութիւնը երեւան են գալիս նրա մեղեդիների (որոնք ինքնուրույն ստեղծագործութիւններ են, այլ ոչ՝ ֆոլքլորի մշակում) բացառիկ գեղեցկութեան մէջ՝ թողնելով չգերազանցուած քաղցրութեան մի զգացում, - գրել է գրող, կոմպոզիտոր Վերջիլ Թոմսոնը: - Դրանց մէջ ճշգրտող, ցուցադրական, պարզունակ կամ ցածր ու անճաշակ բան չկայ: Նրա երաժշտութիւնը հաճոյք է մեր ականջի եւ մտքի համար...»:

Իսկ մեզ համար՝ այդ բոլորը՝ յաւելած ազգային հպարտութեան անխառն զգացողութիւնը: **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ**

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ
(200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

ՀԻՒՄԻԼԻՅԻՆ ԱՐԻՒՄԻՅԻ ԱՐԻՄՏԵԼԻ ԹԻՒ
Հովանաւորութեամբ՝
ԹԻՒՈՒ ԲԻՒԵԼԻ ԱԿԱԾՈՒՄ
Գերշ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ
Կապանակերպութեամբ՝
«ԶՈՒԱՐԹՆՈՅ» Մշակութային Վարչութեան
Գրասխանակալ Էքսիկոյ՝
ՀԱՐԱՒՅԻՐԻՆ ԱՐՅԱՆԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՆ
ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՅՆՆԵՐԸ
Գրասխան
Արժ. Տ. ԳԵՈՐԳ ՔԻՆՅ ԱԲԵԱՆ
ԳԵՂԱՐՈՒԷՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
Տեղի կ'ունենայ
Հիւզաբքի, Մարտ 30, 2023, երեկոյեան ժամը 7:00-ին
Առաջնորդարանի «ԱՐՄԵՆ ՅԱՄԱՐ» Սրահ
3325 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504
Հիւրասիրութիւն Մուտքը Ազատ



Խորհմաստ Ծերութիւն

Ռ. ԿՈՐԻԻՆ

Արդէն մի քանի ամիս էր մեր Իրանահայ միութեան ուրբաթօրեայ Հանդիպումներից բացակայում էր շրջանակի անդամներից բոլորի կողմից սիրուած եւ յարգուած Ներսէսը, որի ներկայութեան եւ ուշադիր ունկնդիրը լինել անցեալի յուշերով բեռնաւորուած պատումներին եւ գրութիւնների ընթերցումներին:

Ներսէսի բացակայութեան պատճառը հեռախօսագանգով տեղեկացալ ըստ իր յայտնած տեղեկութեան, թէ:

«Սիրելի Ռուբէն նախ ասեմ որ միութեան մօտիկ բնակարանից տեղափոխուել ենք շատ հեռու, ոչ մեքենայ եմ վարում, ոչ էլ առողջութիւնս է ներուժ տանից դուրս գալ, ոտքերիս ուժը նուազել է հագիւ գաւազանով եմ քայլում, գետին ընկնելու վախը ինձ նստակեաց է դարձրել:

Ահա տեղեկանալով մեր սիրելի Ներսէսի առողջական վիճակի մասին որոշեցի այցելել իրեն: Օրը Չորեքշաբթի Մարտի 2, 2023 թ. կարօտով ճամբայ ընկալ ինձ ուղեկցելով Ծաւար Ղազարեանը մեր մեծարելի բանաստեղծ, երգիծաբան եւ մշակութային գործիչ սիրելի Ներսէսին այցելելու համար, տէր եւ տիկին մեզ սրտաբաց ընդունեցին: Ուրբաթօրեայ հանդիպման շուրջ գրոց գնաց տեղեկացնելով, թէ:

«Շրջանակը հետզհետէ նեղանում է նոր դէմքեր՝ երիտասարդներ չմասնակցելով, այն էլ որ կայ մի քանի տարեցներ են:

Խօսուեց «Տեղեկատու»-ի մասին նա ասաց:

«Հիմա որ նստակեաց եմ դարձել թերթի նիւթերը պատրաստում եմ տանը եւ սիրելի կարիւնէ աղջկա միջոցով ուղարկում եմ խմբագրական կազմին:

Սիրելի Ներսէսը Լոս Անճելոսի Իրանահայ Միութեան՝ «Տեղեկատու» ամսաթերթի խմբագիրն է սկսեալ 1998-ից: Թերթի էջերը ճոխացում են իր գրութիւններով, միութեան անցուղարձից եւ հայ մամուլից մեղուի հոտառութեամբ լուրերով՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքեան տարբեր օճախներ, առաւելաբար Իրանահայ կեանքից պաշտօնաւոր անձերի, գրողների, մշակոյթի գործիչների եւ այլ լիշատակելի եւ ոգեւորիչ տեղեկութիւններով:

Սիրելի Ներսէսը այլ արժանիքների հետ նաեւ յայտնի է «Ամանորեան Բարեմաղթանքներին» երկարաշունչ քառատողերի գրութեամբ, որը երկարատեւ անցեալով հրատարակուած է Թեհրանի «Ալիք» օրաթերթում Ամանորեան բացառիկ համարում՝ «Խարտոց Հարթոցեան» հեղինակային գրական անունով: Այդ սրտամօտ եւ պահանջող իւրաքանչեւ գրութեան մէջ բարեմաղթանքներ է կատարում Հայաստանից սկսեալ մեր գոյգ հայրապետներին, առաջնորդներին, թեմական դրուածքին, հասարակական-ազգային եւ մշակութային գործիչներին, ուսուցիչներին, գրող-մտաւորականութեան եւ այլն, դրուատանքի խօսքեր, առաջադրանքներ եւ յորդորներ ամէն ինչ յարգալից եւ կառուցողական սրտցաւ մտայնութեամբ:

Այդ «Ամանորեան Բարեմաղթանքները» քանի սերունդների ընթերցանութեան նիւթ է դարձել մտքեր լուսաւորելով, ազգային եւ հայրենասիրական ոգի, հաւատ ու սէր մեր եկեղեցու, սովորութիւնների եւ մշակոյթի հանդէպ հպարտութիւն եւ խոնարհում է ներշնչել մեր սփիւռքեան կեանքում:

Իմ ճանաչողութիւնը Ներսէսի հետ երկար տարիների անցեալ ունի Իրանի շահի օրերից սկսեալ «Ալիք»-ում եւ Կլենտէյլում «Քաջ Նազար»-ի էջերից՝ տպուած բա-



նաստեղծութիւնները, կսմիթները եւ Ամանորեան բարեմաղթանքները:

Սիրելի Ներսէսը հինգ բանաստեղծական գրքերի հեղինակ է, պարսկերէնի է թարգմանել հոգեբան դոկտ. Մեսրոպ Բալայեանի օգնութեամբ եւ առաջաբանով Մկրտիչ Արմէնի՝ «Պատուիրեցին յանձնել ձեզ» գիրքը: Անտիպ են մնում՝ 1-«Խառնափնիթոր» (երգիծաքննադատական յօդուածներ, մանրապատումներ եւ կսմիթներ) 250 էջ, որն արժանացել է Ս. Ներսէս Շնորհալի գրական մրցանակին: 2-«Մատլի Բաջիլի թեհրանեան նամականին» 350 էջ: 3-«Աւօրեայ կեանքում» (երգիծական ժողովածու) 300 էջ:

Նրա գրքերը գրախօսուել են դրուատանքի գրութիւններով: Երկար տարիների Իրանահայ գրողների միութեան անդամ, Գալիֆորնիայի Հայ Գրողների միութեան անդամ, Նաեւ ՀՀԳ-ի անդամ: 2011-ին արժանացել է «Հրանտ եւ Մանուշ Սիմոնեաններին» գրական մրցանակին, նաեւ Սրբ. էջմիածնի Հայրապետական կոնգրակով 2018 թ. արժանացել է Սրբ. Սահակ Մաշտոց շքանշանին:

Սիրելի Ներսէսը իր հայրենասիրական եւ մարդասիրական գրականութեամբ եւ մշակութային

բարձր ծառայութիւններով լիշատակելի աւանդ է ներդրել մեր սփիւռքեան կեանքում, որի համար արժանացել է բարձր գնահատանքներին:

Այո՛, երախտաւոր անձանց պէտք է սիրել, յարգել եւ արժեւորել արածն ու կատարածը քանի կենդանի են, ապրում են եւ Աստուած իրենց արեւշատութիւն պարգեւի իրենց մտքերից, գաղափարներից եւ ծառայութիւններից յօգուտ քաջալերանք գալիք սերունդներին:

Պատեհ առիթ նկատեցի արտացոլել սիրելի Ներսէսի այս գեղեցիկ ու իմաստալից բանաստեղծութիւնը՝

«Գնահատում եմ այն ազնիւ մարդուն,

Որ բարութիւն է կտակում որդուն:

Ես մեծարում եմ լիշատակն այն հօր,

Որ լաւութիւն է արել ամէն օր:

Սիրում, պաշտում եմ այն իրաւ հային,

Որ քրտինք է խառնել հայրենի հողին»:

Սիրելի Ներսէսը շատ էր ուրախացել մեր այցելութեամբ, հրաժեշտ տալով մաղթեցինք առողջութիւն եւ արեւշատութիւն:

Աշխարհը Շալակած Տանողն Էր Արսէն Ճանեան


ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Լսած էի իր մասին նախքան որ անձամբ ծանօթանամ: «Երանի եղբօր հետ ծանօթացած ըլլալիս, նոյն գլուխը ունիք» ըսած էր իր քոյրը Սայաթ Նովա Երզնիստումբի շարքերէն, մեր սիրելի ընկերուհի՝ Արփի ճանեան:

Բնածին յատկութիւն մըն էր կարծես գերզգայնութիւնը Արսէն ճանեանի համար: Առանց վարանումի կարելի է ըսել թէ ան իր տարաբախտ ժողովուրդի բոլոր յատկանիշները շաղկած ապրեցաւ իր կեանքի ուղին: Զրկանքներով լեցուն այդ ճանապարհի մէջ, քանի քանի անգամներ հարկադրուեցաւ իրը համարածէն, հարազատէն, սեփականէն գրկուելու: Վերատիրանալու բոլոր առիթները շահագործեց: Ծնած էր 10 Յունուար 1938ին Մուսա Լեռ գաւառի Վաքըֆ գիւղը: Նախնական կրթութիւնը ստացած էր գիւղի վարժարանի մէջ: Ապա առաջին սանեքէն եղաւ Պոլսոյ մէջ հիմնուած Սուրբ Խաչ Դպրեվանք երկրորդական վարժարանի: Նորահաստատ այս վարժարանի առաջին սերունդը երկրորդականը աւարտեց քաղաքի տարբեր վարժարաններու մէջ: Արսէն ճանեանն ալ շրջանաւարտ եղաւ Պոլսոյ Մի-

թարեանէն: Աւարտեց Իսթանպուլի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետի մանկավարժութեան եւ փիլիսոփայութեան բաժինը: Հայոց լեզու եւ գրականութիւն դասաւանդեց Պոլսոյ հայկական դպրոցներուն մէջ: Որպէս գիւղացի ընտանիքի զաւակ, երբ ուսման համար կը հեռանար հայրենի երկրէն՝ Մուսա Լեռան վաքըֆ գիւղէն, հողի հետ կապը արտայայտեց իր քերթուածներով: Պոլսոյ ուսանողութեան տարիներուն՝ 1962ին հրատարակեց երկու փոքրիկ հաւաքածոյ. «Հողին Հետ» եւ «Արեւուն Տակ»: «Միայն 1500 Տող» հրատարակուեցաւ 1971ին Փարիզի մէջ:

1978 բախտորոշիչ թուական մը եղաւ Արսէն ճանեանի համար, քանի ան որոշեց ընտանեօք ներգաղթել հայրենի երկիր: Այստեղ եւս շարունակեց իր ուսուցչական ասպարէզը Երեւանի Պետական Համալսարանի արեւելագիտութեան ֆակուլտետի մէջ դասաւանդելով թրքական լեզու եւ գրականութիւն: 2010ին Երեւանի մէջ լոյս տեսաւ ճանեանի արձակ ստեղծագործութիւններու հատորակը. «Ես Գալիս Եմ Իմ Պապի Գրկից» խորագրով:



Արսէն ճանեանի ապրած մեծագոյն ողբերգութիւնն էր իր միակ որդոյն Կարէնի նահատակութիւնը Արցախեան առաջին պատերազմի ընթացքին: Այս ծանր կորուստին արտացոլումը եղաւ «Մտաւորական Մարտիկը» հատորը:

Կարէնի կորուստէն ետք Արսէն ճանեանի միակ մխիթարութիւնն էր հողագործութիւնը: Աւանի իր բնակարանէն ոչ շատ հեռու ունեցաւ հողամաս մը, որու մշակումը իր տառապանքներու մխիթարանքը դարձած էր:

Դառն իրողութիւն է որ Հայաստան ներգաղթը իր բարիքներու կողքին բերաւ նաեւ հիասթա-

փութիւն հաւատաւոր ու նուիրեալ համայնավարի համար: «Բագրատ սիրելիս, քու Արսէն քեռիդ այստեղ գող դարձաւ: Ըրի այնպէս բաներ, որոնք լիշել իսկ չեմ ուզեր»: Այսպէս պատմեց իր տառապի համար լքուած ջերմոցի խողովակները տուն բերելու պատմութիւնը: Երեւոյթ մը, որ նախապէս վիճակած էր իր նման գաղափարական կանխապաշարով Հայաստան ներգաղթած եւ ապա յուսախաբ եղած շարք մը պոլսահայ մտաւորականներ:

Խուճկ ու յարգանք իր բարի լիշատակին եւ մխիթարութիւն այրիին՝ Հերմինէին եւ դուստրին՝ Յաւերժին:

«ԱԿՕՍ»

Գրախօսական MONOLOGUES «ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՆՆԵՐ» Հեղինակ՝ Պերճ Չոլաքեան

ԿԱՐԻՆԵ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ

Ստացանք Պերճ Չոլաքեանի հեղինակած «Մենախօսութիւններ» (Berj Cholakian; "Monologues", Published in the USA, 2015) անգլերէն հրատարակութիւնը՝ 8 տարիներ յետոյ: Տպագրութեան որակը, ներկայանալիութիւնը անուարկելի էին:

Ժամանակը չէր ազդել զրքի նպատակի, դրա համարժեքային տարողութեան վրայ, եւ մենախօսութիւնները տարածում են հեղինակի իւրօրինակ եզրակացումները մեր պարած կեանքի մասին:

Ընթերցման ընթացքում, նոյնիսկ անգլերէնի մեր ոչ բարձրակարգ իմացութեամբ, առանձնացան մտքեր, որ փորձեցինք ներկայացնել, ըստ մեր ըմբռնման եւ կարողութեան:

Չնայած Պերճ Չոլաքեանի համար՝ «Երէկը հանգուցեալ է, վաղը չծնուած է, եւ այսօրը անստոյգ է» (էջ 16), նա այնուամենայնիւ փորձում է վերլուծել կեանք կոչուած առեղծուածը:


Ըստ հեղինակի՝ կեանքը մի դրուագ է անսահմանութիւնից, անպտուղ մի ձեւականութիւն, կործանիչ փրկիստփայտութիւն, սակայն նա դեռ երազում է. «Երբէք մի՛ յանձնիր երազը» (էջ 28) կամ «Երազները մենք պէտք է փոխարկենք ուժեղ եւ աշխարհիկ հաւատքի» (էջ 33):

Արժեւորելով երազանքը նա հաստատում է. «Որեւէ իրակա-նութիւն կեանքում սկսում է երազով» (էջ 41):

Վերլուծում է նաեւ ժամանակի հասկացողութիւնը. «Ժամանակը դառնում է անիմաստ՝ առանց գոյութեան» (էջ 29): Նաեւ՝ «Մենք կեանքում կարող ենք ունենալ համարեայ ամէն բան, բացի աւելի ժամանակից» (էջ 42), այս ձեւով գերակայելով ժամանակի արժեքը:

Միւրոյ գաղափարի վերլուծումը Չոլաքեանը կատարում է իր անձնական կեանքի վերիվարումներից ելնելով, եւ մանաւանդ իր պատանի գաւազի անժամանակ կորուստը ստիպում է նրան փրկիստփայտել եւ այդ ձեւով կարծես փորձում է դարձնել ներքին վիշտը նաեւ հաղորդակից դարձնել շրջապատին իր մտորումներին: Սէրը նրա համար տիւրը իրականութիւնից դուրս գալով մի լուսաւոր գագուցում է. «Դա այն կրակն է, որ նոյնիսկ եթէ տարիքը նուազեցնում է այն, այդ վայելքի ծայրակէտը ապրում է քո հոգու ընդերքում» (էջ 31):

Չարմանալի էին մեզ համար հեղինակի բնագանգական մտածումները. «Դրախտի հասկացողութիւնը... արդիւնքն է մարդկութեան հնարամիտ երեւակայութեան, որպէս մեքենայութեան գործիք, կաշառք կամ առեւտուր» (էջ 50): Բաւական վերլուծութիւններէրից յետոյ, «Դրախտի դիցաբանութիւնը» մենախօսութեան մէջ հեղինակը յանգում է հետեւեալ եզրակացութեան. «Անձնապէս ես կը նախընտրեմ հաւատալ «Աստծուն»՝ չհաւատալով «Կրօնին» եւ «Դրախտի»՝ զիցաբանութեանը» (էջ 52): Հեղինակը վստահեցնում է, որ տարբեր կրօնների գոյութիւնն է, որ պատճառ է



Berj Cholakian

դառնում երկարամեայ պատերազմների, դարաւոր բախումների՝ մեր միջեւ: Չոլաքեանը հաւատ եւ Աստուած գաղափարները տարանջատում է միմեանցից:

Շարունակելով փրկիստփայտել Աստծոյ մասին՝ նա գրում է. «Աստծոյ մտապատկերը՝ իր ամենագորութեամբ, որպէս ծայրագոյն հեղինակութիւն... ստեղծուած է մարդու կողմից, վախից եւ անգիտութիւնից անհայտութեան մասին» (էջ 67): Ու ստեղծուած մտապատկերին հակադրում է սէրը, որպէս բարութեան վերջնական յաղթանակ չարի նկատմամբ:

Ու դարձեալ վերլուծում է կեանքը՝ այն համարելով «յաւիտենականութիւնից գոյացուած ժամանակահատուած»՝ նաեւ՝ ակնթարթ, ներկայ վայրկեանը, որ շարժում է առաջ (էջ 77):

Արդեօք այսքա՞ն կը խորանային հեղինակի մտածումները, եթէ չունենար անկիւնադարձային պատահարներ: Որդեկորոյս հօր վիշտը դեռեւս չի սպիանում եւ նա երկար խօսակցելուց յետոյ հանգուցեալ որդու հետ, մնաք բարով է ասում իր սիրելիին՝ շուտով տեսնուելու հաւատքով:

Չոլաքեանը գրելով փորձում է «մոլեգնաբար» ազատուել իր մտածումներից, որ լրջօրէն չարչարում են իր հոգին երկար ժամանակ (էջ 87): Շատ են այդ մտածումները. փնտռում է արժէքի ըմբռնումը, գաղափարը, փնտռում է սէրը՝ մարդու համար կարեւորելով դրա պահանջը այնպէս, ինչպէս բոյսերն են կարօտում անձրեւին:

Դարձեալ ու դարձեալ գալիս է խորհրդածութիւնը մեր պարած կեանքի մասին. «Արդեօք այն յուզումնային տրամաբանութիւնն է, թէ բանական յուզում» (էջ 90), կամ էլ՝ «Կեանքը մի կարճ շրջան է ծննդեան եւ մահուան միջեւ»: Գրողը անարդար է համարում կեանքը՝ նոյն արցունքներով ես ընդունում թէ՛ ուրախութիւնը, թէ՛ վիշտը:

Իր զրքի վերջաւորութեան նա իր պարտքն է տալիս հօրը, «ու՞մ ազգանունն է կրում պատուով», նաեւ՝ մօրը, «ու՞մ ծիներն է կրում խոնարհաբար»: Չոլաքեանը այդ մենախօսութիւնը նուիրում է հօրը՝ որպէս Հայոց ցեղասպանութիւնը վերապրածի, եւ շնչում է նրա ականջին. «Փոթորիկն անցել գնացել է, եւ

Շար.ը էջ 15

Թուրքիոյ Հայոց Պատարիարքի Այցելութիւնները Ադտի Գօտի



Թուրքիոյ Հայոց պատրիարք Ամենապատիւ Տէր Սահակ Բ. անցնող շաբթուան ընթացքին, միօրեայ այցելութեան մը տուաւ ադտի գօտի, մասնաւորաբար Իսթենտեբուլի եւ Մերսին: Հովուապետական այս հանդիպումներուն իրեն կ'ուղեկցէր գաւազանակիր Արժ. Տ. Շիրվան Քհնյ. Միւրգեան: Ան այցելեց Իսթենտեբուլի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին եւ դիմաւորուեցաւ Անտիոքի եկեղեցիներու հոգեւոր հովիւ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Թապաշեանի եւ Ծխական Խորհուրդի ատենապետ Եոսուֆ Թապաշեանի կողմէ:

Պատրիարք հայրը քննարկեց եկեղեցւոյ ներքին վիճակը եւ անոր մօտ եկեղեցւոյ հովուատունը, որ դժբախտաբար անգործածելի դարձած է: Վնասուած է նաեւ եկեղեցւոյ կից շէնքը, որ հաստեղծութեան կալուած է: Սրբազանը խոստումներ տուաւ վերանորոգութեան մասին եւ պատշաճ տնօրինումներ կատարելու:

Պատրիարք հայրը Իսթենտեբուլի

րունէն բաժնուելով հասաւ Մերսին եւ յոյն ուղղափառ եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ եկեղեցւոյ հովիւ Տ. Իսիիր Քհնյ. Թէյմուրի կողմէ: Ներկայ էին նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Եկեղեցւոյ սրահին մէջ զրոյց ունեցաւ երկրաշարժէն աղիտահար ընտանիքներու հետ եւ աղօթեց որ Աստուած զօրացնէ եւ համբերութիւն պարգեւէ դժուարութիւնները յաղթահարելու:

Նորին Ամենապատուութիւնը ապա այցելեց քաղաքի կաթոլիկ եկեղեցին եւ դիմաւորուեցաւ հովիւ Ֆրանսուա վարդապետին եւ հայ համայնքի անդամներուն կողմէ: Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ աղիտահար ընտանիքներու մասնակցութեամբ: Պատրիարք հայրը աղօթեց եւ հայրական խօսքով մխիթարեց ներկաները: Նոյն օրը պատրիարք հայրը վերադարձաւ Իսթանպուլ: Իրեն կ'ընկերանար նաեւ Պատրիարքարանի ընկերային օժանդակութեան անդամներէն՝ Հերման Գաւաֆեան:

ՇՆՈՐՀԱՆՈՒԷՍ

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ

Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ

S. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԷՐԵԱՆԻ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ

ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆ-ի Շրջ. Վարչութեան

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«Ձուարթնոց» Մշակ. Յանձնախումբի

Մելգոնեան Կրթական Հաստատութեան Սանուց Միութեան

Չորք-Մարգարանի Հայրենակցական Միութեան

Գիրքը կը ներկայացնէ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՐԿ. ԳՈՒՄՐՈՒԵԱՆ

BOOK PRESENTATION

“FROM THE SHORES OF PHOENICIA”

By Minas Piunik

Տեղի կ'ունենայ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի «Համբար» սրահի մէջ,

հինգշաբթի, 23 ՍԱՐՏ 2023-ին

Երեկոյեան ժամը 7:00-ին
Հասցէ՝ 3325 N. Glenoaks Blvd.,
Burbank, CA 91504 **Մուտքը Ազատ**

Մտերմիկ Ընդունելութիւն Եւ Զրոյց Պոլսահայ Միութեան Մէջ



Մեծ հաճոյքն ունեցանք վայելելու Պոլսաբնակ շնորհալի հայուհի Գարոլին Սարգսյանի Մամիկոնեանի ներկայութիւնը Պոլսահայ Միութեան Երզրէի Տակ Հինգշաբթի, Փետրուար 9, 2023ին Լոս Անձէլըս այցելութեան առիթով:

Գարոլին գանազան տեղեկութիւններ տուաւ Պոլսոյ հայ համայնքի արուեստական, գրական, կրթական ու համայնքը հետաքրքրող այլ նիւթերու շուրջ: Ան մանրամասնօրէն ծանրացաւ Պոլսոյ մէջ Նոյեմբեր 2020-էն ի վեր ներկայացուող «Կոմիտաս» թատերախաղի ներկայացումներու եւ արձանագրած յաջողութեանց մասին: Թատերախաղը կը ցոլացնէր Կոմիտասի կեանքը իր ծննդավայր Կուտիւնայէն (Քիւլթահիա) մինչեւ Փարիզ:

Բոլորովին ոչ-հայկական արտադրութիւն մը մեր մեծ հանճարի մասին որու անունն ու գործը դարձած է ազգի ինքնագիտակցութեան եւ ինքնութեան պարտադիր բաղադրիչ: Գրի առնուած եւ բեմադրուած Ահմէտ Մամի Էօզպուտաքի եւ Կոմիտասի դերը ստանձնած՝ Ֆեհմի Գարասպյան «Եոլճու» թատերախումբէն: Խաղը լոյս կը սփռէ այն պատմական իրականութիւններուն որոնք տասնամեակներ արգիլուած են նիւթ հանդիսանալ այդ նոյն հողերուն վրայ:

Ներկայացման երաժշտական բաժինը ստանձնած է Գարոլինի կողակից Պր. Յակոբ Մամիկոնեան, որ խմբավար է Պոլսոյ 90ամեայ «Լուսաւորիչ» երգչախումբին: «Լուսաւորիչ» երգչախումբը կազմուած է 30 հայ երիտասարդ-երիտասարդուհիներէ: Երգչախումբը մեծ յաջողութիւն արձանագրած շնորհիւ Պր. Յակոբ Մամիկոնեանի տարած տքնաջան ու նուիրուած աշխատանքներուն: Երգչախումբը խաղարկութեան տեղողութեան ընթացքին կիսաթափանց սեւ վարագոյրի մը ետին, դերակատարին համընթաց, կը ներկայացնէ մեծագոյն հանճարի ստեղծագործութիւնները մաս առ մաս:

Ներկայացումները տեղի կ'ունենան ու պիտի շարունակեն ունենալ Գոմգաբուի Որդուց Որոտման եկեղեցոյ սրահը որը աւելի իւրաքանչիւր ու հետաքրքրական կը դարձնէ բեմադրութիւնը: Թրքերէնով եւ ֆրանսերէնով ներկայացուած խաղարկութիւնը անսպասելի ու լայն ընդունելութիւն գտած է ոչ թէ միայն Պոլսոյ հայ համայնքի այլ թուրք եւ այլ ազգերու կողմէ ու արժանի հանդիսացած բազում մրցանակներու, գովասանքներու:

Սոյն բեմադրութիւնը ներկայացուած է նաեւ Հայաստանի մէջ նոյնպէս գնահատանքի արժանանալով տեղւոյն բարձր արուեստի ճաշակի տէր հետեւաբար դժուարահաճ արուեստագէտներու կողմէ:

Ազնուափայլ հայուհին, Գարոլինը, կը շարունակէ իր ուսուցչական ասպարէզը գտնելով հոգեկան բաւարարութիւն, ներշնչելով հայոց հոգին ասպագայ սերունդներուն:

Գարոլին կը խոստովանի թէ Կեդրոնականի այժմեայ տնօրէնուհի՝ Տիկին Սիլվա Գուլումճեան մեծ դեր ունեցած է իր մէջ բուռն համակրանք յառաջացնելու՝ հայկական լեզուի ու գրականութեան հանդէպ: Այսուհետեւ հետեւելով իր իղձերուն, հայ գրականութեան յատուկ դասընթացներ ստացած է Պր. Հատտեճեանէ եւ բանաստեղծ Ջահրատէ:

Համեստ ու երեւելի հայուհին նաեւ անդրադարձաւ Թուրքիոյ եւ արտասահմանի տարածքին Պոլսահայ երիտասարդներու արձանագրած բարձր յաջողութիւններու մասին, ըլլալ գրականութեան, ըլլալ արուեստի եւ երաժշտութեան ճիւղերու մէջ:

Գարոլինի խոսքերը կը բխէին իր սրտի խորքերէն այնքան որ զգացումները կը փոխանցուէր մեզ ապրեցնելով յուզմունքի, ուրախութեան, պարծանքի ու գայլոյթի խառն զգացական պահեր: Ան թարմացնելով մեզ կը հաղորդէր առօրեայ եղելութիւնները, նաեւ իրենց կարողութիւններէն վեր գարգացող անցողարձեքով յառաջ եկած խնդիրները, իրազեկ ըլլալով տեղի ունեցող իրադարձութիւններուն զգացուած՝ բաց ոչ միամիտ:

Ուսուցչական ասպարէզին առնչութեամբ ան նաեւ կը շարունակէ թատերական ու պարի աշխատանքներ վարել: Վերջին մի քանի տարիներու ընթացքին ալ սկսած է հանդիսավարել «Դիմանկարներ» անուան տակ յայտագիր մը որը կը սփռուի «Լոյս» հեռատեսիլի կայանէն ուր հայկական մշակոյթն ու արուեստը քարոզող ծրագիրով կը հիւրընկալէ հայ համայնքի արժէքները: Սոյն հաղորդաշարի երկրորդ բաժնի հատուածները պիտի սկսին Մարտ ամսուան մէջ:

Ինչ իմաստ կ'ունենային գիտելիքները, մշակոյթը եթէ անոնք չփոխանցուէին յաջորդ սերունդին: Առնուած ամէն մի քայլ կարեւոր է ազգի մը գոյատեւման առնչութեամբ: Սերմանել հունտերը երիտասարդ սերունդին որպէսզի ծաղկին ու ծլանան ասպագային:

Այնպէս որ ողջոյն բոլոր անոնց որոնք աշխատանքներ կը տանին սոյն ուղղութեամբ:

Ձեր ալ վարձքը կատար սիրելի Գարոլին որ դուն ու կողակիցդ ձեռք ձեռքի տալով, ձեր կարգին այս պաշտօնը կատարելու պայքարը կուտաք:

ԳԱՐՈՂԻՆ ՍԱՐԸՊՈՅԱՆՆԵԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ծնած է 1972 թուականին Պոլիս:

Աւարտելով էսսեան վարժարանը, ան երրորդ տեղով աւարտած է Մարմարայի համալսարանի կրթութեան Հիմնարկի մարմնամարզանքի բաժինը:

25 տարի դասուանդած է Կեդրոնականի եւ Թարգմանչաց վարժարաններու մէջ:

Հիմնած է «Երագ» ժամանակակից պարի համոյթը եւ 1995-2000 թուականներուն բեմադրած բազմաթիւ ներկայացումներ՝ որպէս պարուսոյց եւ գլխաւոր դերակատարական դերակատար: Իր անսամպլի հետ հրաւիրուած է փառատօներու ու հեռուստացոյցերու:

Ան բանաստեղծ Ջահրատէն եւ «Մարմարա» թերթի գլխաւոր խմբագիր, գրող Ռոպէր Հատտեճեանէն դասեր առած է հայ գրականութեան մասին:

Ելոյթներ ունեցած է Կեդրոնականի կողմէ կազմակերպուած բազմաթիւ գրական երեկոներու ժամանակ: Ան կատարեց Ջահրատի յիշատակին կազմակերպուած գրական երեկոյի շնորհանդէսը: Ան ներկայացուցած է Հրանդ Տինքի օրաթօրիակի շնորհանդէսները Հայաստանի մէջ կայացած համաշխարհային բրեմիերային եւ Պոլսոյ համերգին:

Մասունցներու պար կոչուող ներկայացման համար ան յատուկ հրաւէր ստացած է Հայաստանէն եւ շնորհանդէս ըրած է Երեւանեան եւ Պոլսական ցուցադրութիւններուն:

Ամուսնոյն՝ Յակոբ Մամիկոնեանի, մենակատար Պարթեւ Կարեանի հետ եղած է Պոլսոյ հայկական առաջին սիմֆոնիք էսթրատային համերգաշարի՝ Desilk համերգներու հիմնադիրներէն:

Մասնակցած է Փոքրիկ հայկական հեքիաթի կայքի թիմին եւ մասնակցած է հայոց դպրոցներուն մէջ հայոց լեզուի տարածման ու զարգացման ջանքերուն՝ եւ որպէս Բրաքթիք, եւ որպէս պատմող:

Կոմիտաս վարդապետի յիշատակին կազմակերպուած «Ինչու»-աի նախաձեռնութեամբ պարած է ժամանակակից պարերի ներկայացումին:

Ան պարած է որպէս գլխաւոր դերերէն մեկը բազմաթիւ ներկայացումներուն Լեւոն Թաբերեանի անուան ժամանակակից պարի համոյթի հետ, որուն միացած է 1995 թուականին: Վերջին անգամ ան բեմ բարձրացած է որպէս «Անուշ» (2013) եւ «Եոլճու» (2019) թատերախումբի գլխաւոր հերոսներէն մէկը:

Պոլսոյ մէջ Հայաստանի մշտական ներկայացուցչութեան տարեդարձի կապակցութեամբ Լիւթֆի Քըրդար Քոնկրէսին մէջ տեղի ունեցած արձանագրային գիշերը ան նաեւ՝ մասնակցած է կազմակոմիտէին եւ Աթթիի հետ ներկայացուցած է գիշերը: Հանդէս եկած է Սարօ Պենկլեանի հետ:

«Լոյս» հեռուստաընկերութեամբ՝ հայերէն եւ թրքերէն հեռարձակուող առաջին հայկական հեռուստատեսութեամբ, ան ամէն շաբաթ կը պատրաստէ եւ կը ներկայացնէ հայկական մշակոյթն ու արուեստը քարոզող հաղորդումներ՝ «Դիմանկարներ» հաղորդաշարով, որ կը հեռարձակուի ամբողջ Թուրքիոյ, մշակութային եւ արուեստի ծրագրով, որ կը հիւրընկալէ հայ համայնքի արժէքներուն:

Գրի առաւ՝ Ջարուհի Գ. Խաչիկեան

MONOLOGUES «ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ»

Շարունակուած էջ 11-էն

գարունը միշտ պիտի առկայ թո ողորմած յիշատակով»:

Լիբանանում ծնուած եւ մեծացած, Պէյրութի Ամերիկեան համալսարանից Առեւտրական գործերի կառավարչի եւ ժամանակակից փիլիսոփայութիւն եւ հոգեբանութիւն զոյգ մասնագիտութիւններով շրջանաւարտ Պերճ

Չոլաքեանը, հասուն տարիքում, այս բանաստեղծական մենախօսութիւններով իր կտակն է տալիս մարդկութեանը: Հատորը նուիրուած է հեղինակի վաղամեռիկ որդուն՝ Սեւակին եւ դատերը՝ թամարային:

Այսքան մանրակրկիտ վերլուծումներից յետոյ կարելի է ակնկալել, որ Պերճ Չոլաքեանը դեռեւս ասելիքներ ունի մարդկութեանը:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

ՄԱՐԱԶԴ



ՅԱԿՈՐ ԽՊՈՅԵԱՆ
1941-2023 Ծնեալ Լիբանան

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ հօր, եղբոր, քեռայրին եւ հարազատին **ՅԱԿՈՐ ԽՊՈՅԵԱՆ**ի մահը որ պատահեցաւ Երկուշաբթի 13 Մարտ, 2023ին յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան եկեղեցական կարգը տեղի պիտի ունենայ 22 Մարտ, 2023ին առաւօտեան ժամը 11:00ին, Փաստօրնայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մէջ, 2215 E Colorado Blvd, Pasadena, CA 91107, իսկ գերեզմանի կարգը պիտի կատարուի Live Oak գերեզմանատան մէջ 200 E. Duarte Road, Monrovia CA 91016:

Սգակիրներ՝
Այրին՝ Տիկ. Անահիտ Խպոյեան
Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Անժելա Խպոյեան եւ զաւակունք Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սեւան եւ Շողիկ Եագճեան եւ զաւակունք Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նորա Աջապահեան եւ զաւակունք
Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Սիրվա Խպոյեան (Դամասկոս) Տիկ. Մայրանուշ Սողոմոնեան
Տ. Տաթև Ա. Քհնյ, եւ երէցկիւն Արաքսի Թաթևեան եւ համայն Խպոյեան, Եագճեան, Ճէրէճեան, Աջապահեան, Գոփուշեան, Սողոմոնեան, եւ Տէմիրեան ընտանիքներ:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ Հայ Մարնամարգական Միութեան (AAA) կամ «Մասիս» Շաբաթաթերթի ֆոնտին 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104


Ակտիւ Ֆոն

Շարունակուած էջ 2-էն

միտքը: Իսկ դա տեղի ունեցաւ ՌԴ արտգործնախարար Լաւրո-վի՛ Պաքու այցի շէմին: Այցը տեղի ունեցաւ Փետրուարի 27-28-ին: Զուգահեռ, Ուաշինկթոնն ու Պրիւսիան ձեռնամուխ եղան Մի-չել-Փաշինեան-Ալիւ եւ եւակողմ ձե-ւաչափի նոր հանդիպում նախա-ձեռնելուն: Ռեզիոն՝ Երեւան, մի քանի օր անց Պաքու ժամանեց ԵՄ յատուկ ներկայացուցիչ Տոյվօ Կլա-արը, իսկ նրա Պաքու այցին զուգահեռ, Մարտի 5-ին՝ Ռեզիո-նալ այցով Պաքու ժամանեց Մինս-կի խմբի ամբերիկացի համանա-խազար, որը այդպէս սկսեց իր առաջին այցը Կովկաս՝ Կովկասի հարցերի գլխաւոր բանակցողի կարգավիճակում: Մարտի 5-ին տեղի ունեցաւ ատրպէյճանական դիվերսիոն յարձակումը, իսկ Մարտի 10-ից էլ Ատրպէյճանը կրկին արգելափակել է զազի մա-տակարարումն Արցախ: Իսկ Ալի-եւի աշխատակազմի արտաքին յա-րաբերութիւնները բաժնի ղեկա-վար Հաջիբեւը, որը ԱՄՆ նախա-գահի ազգային անվտանգութեան հարցերի խորհրդական Սալիվա-նի հովանու ներքոյ տեղի ունե-ցած հայ-ատրպէյճանական շփում-ների՝ ատրպէյճանական ներկա-յացուցիչն է, Մարտի 11-ին յայ-տարարել է, որ խօսք չի կարող լինել Ստեփանակերտ-Պաքու մի-ջազգային մեխանիզմի մասին եւ Ատրպէյճանը կը քննարկի միայն «վերահսկողութեամբ», քանի որ Պա-քուն որեւէ երրորդ կողմի հետ չի պատրաստուում քննարկել իր ներ-քին հարցերը: Այդ ֆոնին Հայաս-տանի վարչապետի նախաձեռնու-

թեամբ տեղի է ունենում հեռա-խօսակցող ֆուլիքի հետ, որտեղ եղած հարցազրույցի ստանդար-տից դուրս է թերեւս միայն այն հանգամանքը, որ ֆուլիքը ընդգ-ծել է բոլոր խնդիրները՝ ուսու խաղաղապահների հետ կողմերի շփման միջոցով լուծելու անհրա-ժեշտութիւնը: Բայց ո՞վ է հրա-ժարուում կառուցողականութիւ-նից: Գոնէ առերեւոյթ բոլոր փաս-տերը վկայում են, որ դրանից հրաժարում է Պաքուն:
Հետեւաբար հարց է առաջա-նում, թէ ի՞նչ մեխանիզմ կայ Պաքուին կառուցողականութեան դաշտ բերելու համար, քանի որ ուսուական խաղաղապահ մեխա-նիզմը այդ խնդիրը լուծել չի կարողանում: Երեւանն այդ հա-մատեքստում բարձրաձայնում է միջազգային փաստահաւաք խմբի հարցը: Եթէ ֆուլիքը խաղաղա-պահների հանգամանքը ընդգծում է Երեւանի առաջ քաշած հարցից դժգոհ լինելու համատեքստում, ապա այդ պարագայում թերեւս պէտք է պատասխան ունենայ պարզ հարցին՝ ինչպէ՞ս է պատրաստու-ում խաղաղապահների մեխա-նիզմը աշխատեցնել այդպէս, որ Պաքուն «գայ» կառուցողակա-նութեան դաշտ: Միւս կողմից առանձին հարց է, թէ ընդհանրա-պէս ինչ արձագանք կայ Երեւանի առաջարկի վերաբերեալ ՄԱԿ շրջանակում: Այնտեղ պատրաստ են փաստահաւաքութեան միջո-ցով զսպել Ատրպէյճանին եւ ստի-պել բացել Լաչինի միջանցքը: Առաջժամ չկայ այդ հարցի դրա-կան պատասխանի հեռանկարի որեւէ գործնական ուրուագիծ:
«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՐԱԶԴ



ՊԵՏՐՈՍ ՍԷՖԷՐԵԱՆ

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ եղբոր **ՊԵՏՐՈՍ ՍԷՖԷՐԵԱՆ**ի մահը, որ պատահեցաւ 3 Մարտ, 2023ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 28 Մարտ, 2023ին, կէսօրուան ժամը 1:00ին Կլեմէնտի Ս. Աստուածածին եկեղեցու մէջ, ապա թաղումը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Drive:

Սգակիրներ՝
Այրին՝ Տիկ. Սիրարփի Սէֆէրեան
Զաւակը՝
Սեւակ եւ Սանտրա Սէֆէրեան եւ զաւակունք
Զաւակը՝ Խաժակ Սէֆէրեան
Քոյրերը՝ Ռոզին Միքայէլեան եւ զաւակունք
Գոհար Սէֆէրեան
Եղբոր Տիկինը՝ Աստղիկ Սէֆէրեան եւ զաւակունք
Եւ համայն Սէֆէրեան, Խորշիտեան, Զագեան, Այնճեան, Էնֆիլճեան, Պէնլեան, Տաքէսեան, Ասլանեան, Քարաքաչեան եւ Փարթամեան ընտանիքներ:

Կեանքէն Գեռացաւ Պետրոս Սէֆէրեան

Անցնող շաբթուան ընթացքին, Միշըն Հիլզի «Արարատ» Տարեցներու Տան մէջ, իր մահականացուն կնքեց Պետրոս Սէֆէրեանը: Հանգուցեալը կուսակցական աշխույժ գործունէութիւն ունեցած էր Լիբանանի Պոլոճ Համուտի շրջանի ՍԴԶԿ Սապահ Գիւլ մասնաճիւղին մէջ եւ տասնեակ տարիներու պատասխանատու ղեկավարներէն էր: ԱՄՆ հաստատուելէ ետք, վերջին տարիներուն, տեղափոխուած էր Արարատ Տարեցներու տունը: Մօտէն կը հետաքրքրուէր զաղութային կեանքով: Զերմ ընթերցող մըն էր նաեւ «Մասիս»ին եւ զանազան միջոցառումներով կ'օժանդակէր անոր:

Մեր խորազգաց վշտակցութիւնները հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն եւ ընկերային շրջանակին: Հանգիստ իր յոգնաբեկ աճիւններուն եւ լոյս իր լիշատակին:

Յաւերժի Գանրող՝ Սարգիս Փասգալեան

Փետրուարի ծին Նիւ ձըրզի մէջ մահացաւ լիբանանահայ զաղութի երբեմնի անուանի արուեստագէտներէն՝ Սարգիս Փասգալեան: Ան հիմնադիրն էր շատ մը պարախումբերու, որոնք եղած են ազգասիրութեան եւ հայ պարախումբերու տարածման հիանալի դպրոցներ: Եղած է ՀԲԸՄ-ի պարախումբի ղեկավար, փայլուն յաջողութիւններ արձանագրելով զանազան բեմերու վրայ, յատկապէս Պաալպէքի միջազգային փառօներուն:

Միջնորդը Լախու եւ Առաջ Պէտք է Այցելի

Շարունակուած էջ 2-էն

խաղաղապահները: Եթէ որեւէ միջ-նորդ կամ բանազնաց կամ ներկա-յացուցիչ գալիս հասնում է Երեւան, նա կարող է նաեւ ատումքեանայ նստել ու Երեւանից հասնել Ստեփա-նակերտ՝ ճանապարհին էլ մանրագ-նին կամ գոնէ հպանցիկ տեսնելու՝ ի՞ր աչքով տեսնելու թէ՛ շրջափակ-ուած ճանապարհը, թէ՛ ատրպէյ-ճանցի «բնապահպաններին» եւ օկու-պանտներին, թէ՛ խաղաղապահնե-րին եւ թէ՛, իհարկէ, արցախցիներ-ը: Եթէ Երեւանից Ստեփանակերտ հասնելը դժուար է, անցանկալի է, միջնորդական սկզբունքներին իբ-րեւ թէ հակասող է (չնայած նախկի-նում այդ ճանապարհով լաւ էլ կարողանում են հասնում էին), ապա կարելի է դա անել հակառակ կող-մից: Եթէ որեւէ միջնորդ կամ բանազնաց կամ ներկայացուցիչ գա-

լիս հասնում է Պաքու, նա կարող է նաեւ ատումքեանայ նստել ու Պաք-ուից հասնել Ստեփանակերտ՝ ի՞ր աչքով տեսնելու թէ՛ շրջափակուած ճանապարհը, թէ՛ ատրպէյճանցի «բնապահպաններին» եւ օկուպանտ-ներին, թէ՛ խաղաղապահներին եւ թէ՛, իհարկէ, արցախցիներին: Սա լաւագոյն ճանապարհը կը լինի խուսափել տեղեկատուական կէտե-րից ու խայծերից, Արցախի եւ Ատրպէյճանի ներկայացուցիչների միջեւ չկայացած բանակցութիւննե-րը կամ կիսատ-պատահան հանդիպում-ները անիմաստ տեղը ողջունելուց եւ դիւերսիա իրականացնող Ատր-պէյճանին ու դիւերսիայից տուժած Արցախին, ինչպէս նաեւ Հայաստա-նին ուժի կիրառուածից եւ բռնու-թիւնից գերծ մնալուց հաւասարա-պէս կոչ անելուց...
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

«Պարսելոնային» Յաղթանակ Բերալ Ռաֆինիայի Կողմ

Սպանիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին փոխախօսեան «Պարսելոնան» Պրիպատի մէջ հիւրընկալուեցաւ «Աթլետիքն»։ Սպանացի Չաւիի գլխավորած խումբը յաղթեց նուագագոյն արդիւնքով։

Առաջին խաղակէսի աւելացուած ժամանակին գաթալոնական խումբի միակ կողմը նշանակեց պրագիլցի յարձակող Ռաֆինեան։

«Պարսելոնան» 65 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտի առաւելութիւն ունի երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Ռեալի» նկատմամբ։

«Ռեալի» Յաղթանակը

Սպանիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» Մատրիտի մէջ ընդունեց Պարսելոնայի «Էսպանյոլին» եւ յաղթական դուրս եկաւ 3:1 արդիւնքով։

«Ռեալը» 56 կէտով երկրորդ տեղը կը գրաւէ եւ 9 կէտ ետ է առաջատար «Պարսելոնայէն»։

ՊՍԺ-ին Յաղթանակ Ապահովեցին Սուերի Եւ Միպպի Կողմը

Ֆրանսայի առաջնութեան 27-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Պրեստի» հետ եւ յաղթեց 2:1 արդիւնքով։

Առաջինը կողմը նշանակեցին հիւրերը։ 37-րդ վայրկեանին աչքի ինկաւ սպանացի կիսապաշտպան Կառլոս Սուերը։

«Պրեստի» 43-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց ֆրանսացի յարձակող Ֆրանկ Օնորան միջոցաւ։

Աւելացուած ժամանակին փարիզեան խումբի յաղթական կողմը նշանակեց ֆրանսացի յարձակող Կիլիան Միպպէն։

ՊՍԺ-ն 66 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 11 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մարսելէն», որ մէկ խաղ նուագ կատարած է։

«Արսենալ» Յաղթական Լոնտոնեան Տերպիին

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 27-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» հիւրընկալեց «Ֆուլհեմին»։ Լոնտոնեան տերպի ընթացքին 3:0 արդիւնքով յաղթեց «Արսենալը»։

«Արսենալը» 66 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 5 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն»։ «Ֆուլհեմը» 8-րդն է՝ 39 կէտ։

«Լիվերփուլ» Պարտութիւն Կրեց

Անգլիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին փոխախօսեան «Լիվերփուլը» հիւրընկալեց «Պորնմուտին» եւ պարտութիւն կրեց նուագագոյն արդիւնքով։

«Լիվերփուլը» 42 կէտով կը գրաւէ 6-րդ դիրքը։

«Թորքնհեմի» Յաղթանակը

Անգլիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին Լոնտոնի «Թորքնհեմը» սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Նոթինկհեմ Ֆորեսթի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով։

27 խաղէն յետոյ «Թորքնհեմ» 48 կէտով չորրորդն է եւ 1 կէտ ետ է երրորդ տեղը գտնուող «Մանչեսթըր Եունայթեդէն», որ կատարած է 25 խաղ։

Մեսին Կը Փափաքի Վերադառնալ «Պարսելոնա»

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի եւ աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսին կը կը փափաքի եկող ամռան վերադառնալ «Պարսելոնա», կը հաղորդէ ESPN-ը։



Մեսիի պայմանագիրը փարիզեան ակումբի հետ նախատեսուած է մինչեւ այս մրցաշրջանի աւարտը։ Համագործակցութեան երկարաժամանակ վերաբերեալ որոշում կողմերը դեռ չունեն։

«Պարսելոնան» իր նախկին առաջատարին վերադարձնելու նախաձեռնութիւն չի ցուցաբերեր, թէեւ գաթալոնական խումբի գլխավոր մարզիչ Չաւիին մի քանի անգամ յայտարարած է, որ Մեսիի համար ակումբի դռները միշտ բաց են։

Մեսիին ՊՍԺ-ի կազմէն ներս հանդէս կու գայ 2021 թուականէն սկսեալ։ Անոր հետ փարիզեան խումբը երկու մրցաշրջան անընդմէջ չկարողացաւ յաղթահարել Ախոյեաններու լիգայի 1/8 եզրափակիչի արգելքը։

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts
1 Napoli	26	22	2	2	60	16	44	68
2 Inter	26	16	2	8	47	30	17	50
3 Lazio	26	14	7	5	41	19	22	49
4 Milan	26	14	6	6	43	33	10	48
5 Roma	26	14	5	7	35	25	10	47
6 Atalanta	26	12	6	8	42	30	12	42
7 Juventus	26	16	5	5	44	22	22	38

«Նափոլին» Յաղթեց Եւ Առաջատար Է 18 Կէտի Առաւելութեամբ

Իտալիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» ընդունեց Պերկամոյի «Աթալանթային» եւ յաղթեց 2:0 արդիւնքով։

«Նափոլին» յաղթանակ բերին վրացի յարձակող Նվիչա Կուարացիելիայի եւ քոսովեցի պաշտպան Ամիր Ռահմանիի կողմերը։

«Նափոլին» 68 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 18 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող փոխախօսեան «Ինթերէն»։

«Ինթեր» Պարտուեցաւ «Սպեցիային»



Իտալիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին փոխախօսեան «Ինթեր» հիւրընկալեց «Սպեցիային» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով։

13-րդ վայրկեանին «Սպեցիայի» բերդին նշանակուած 11-մեթրանոցը չկարողացաւ արդիւնաւէտ օգտագործել «Ինթերի» արժենթինցի յարձակող Լաուտարօ Մարտինեսը։

Դաշտի տէրերը խաղի հաշիւը բացին 55-րդ վայրկեանին։ Աչքի ինկաւ իտալացի կիսապաշտպան Տանիէլ Մալտինին։

83-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց միլանեան խումբի պելճիգացի յարձակող Ռոմելու Լուկակուն, որ արդիւնաւէտ կատարեց 11-մեթրանոցը։

2 վայրկեան անց 11-մեթրանոցի իրաւունք ստացաւ «Սպեցիան», որու յաղթական կողմը նշանակեց անկոլացի յարձակող Մալա Նգոլան։ Հենրիխ Միխիթարեանը «Ինթերի» հիմնական կազմէն մէջ էր։ 66-րդ վայրկեանին անոր փոխարինեց պոսնիացի յարձակող Էտին Ջեկուն։ «Ինթեր» 50 կէտով երկրորդն է։

ԵԱ. Էլմիրա Կարապետեանը՝ Պրոնգէ Սետալակիր



Էսթոնիայի մայրաքաղաք թալլինի մէջ կատարուող գնդակային հրաձգութեան Եւրոպայի առաջնութեան օդամղիչ ատրճանակ մրցաձեւին մէջ Հայաստանի ներկայացուցիչ Էլմիրա Կարապետեանը նուաճած է պրոնգէ մետալ։ 10 մեթրէն 60 կրակոցով պայքարին ան նշանակած է 577 կէտ եւ 59 մասնակիցի մէջ գրաւած է երրորդ տեղը։

Հայաստանի հաւաքականը Եւրոպայի առաջնութեան կը մասնակցի 8 մարզիկներով։